

ՀԱՅԱՎԵՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ՅԵԹԵԾ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ!

621.18.

Մ-83



ՀԱՅԱՎԵՆՆԵՐԻ ՅՈՒՍՈՒՑՈՒՐԸ

ԿԱԶՄԵՑ ՅԵՌՅԱԿԻ
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆՔ
Հ. ՄՆԵՑԵԿՈՅԵՑՆ

03.07.2013

30 JUL 2010

626.18
U-83 w8

ՀԱՅԱՊԱՆՆԵՐԻՆ ՈՒՍՈՒՑԵՆՈՂ ՅԵՌԵՎԱԿ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ!



三

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՇԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԵՑ ՅԵՌՅԱԿԻ
ՀԱՆՉԵԱՐԱՐՈՒԹՅԱՄ
Հ. ՄԻԱՅՅԱԿԵՆՅԱՆ

ԿԱԶՄԵՑ ՅԵՐՅԱԿԻ
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄ
Հ. ՄԿԱՅԱԿԱՆՅՈՒՆ



1929

Digitized by srujanika@gmail.com

167

Миша Б

ՏԵՐԵՎԱՆ

15289-57

ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Ե
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԵՎ. ԳՐԱԴԱ-
ՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅՊՈԼԻԿՐԱՖԻ ՏԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 321
ԳՐԱԴԵՐԳԼԽԱՎԱՐ 2037 (Բ)
ՏԻՐԱԺ 400

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Շոգեկաթսալին լավ սպասարկելու համար անհրաժեշտ է, վոր հնոցապանը նրան լավ ուսումնառիրի ու ճանաչի բոլոր այն լերմուզիները, վորոնք առաջ են գալիս կաթսալի սպասավորման ժամերում, կարողանա բացատրել, ու լեթե վնասակար են, նըրանց առաջն առնիր: Շոգեկաթսալին գիտակցորեն սպասարկելուց կախված ե նրա աշխատանքի լերկարատկությունը, վառելանլութիւ խնայողությամբ ծախսելը և, վոր ամենազլխավորն ե՝ նրա անվտանգությունը:

Հագվագեալ չեն որինակները, յերբ հնոցապանի ագիտության պատճառով շոգեկաթսան շարքից դուրս ե լեկել, պատճառ և դառել արդյունաբերության կանգնման, ունենալու վերբեմն ել ավերածության ու գժրախտ գեպքերի՝ մարդկացին զահերով:

Սույն բրոշուրի նպատակն է հնոցապանին առաջն առեղեկությունները, վոր անհրաժեշտ են նրան գիտակցորեն վարելու շոգեկաթսալի սպասարկումը: Դրա համար գրքուցիք լինգգրելու և համառոտ տեղեկություններ շոգեկաթսանների սիստեմների, նըրանց հնոցների, վառելանլութիւ, շոգեկաթսալի արմատուրալի ու նրա գերի մասին և ի վերջո այն պահանջների մասին, վորոնց պետք և համապատասխանեն շոգեկաթսանների սարքածները համաձայն միութենական տեխնիկական որենքների:

Բրոցուրը կազմելիս ովտվել եմ շոգեկաթսաների տեղադրման և ոգտագործման վերաբերյալ գերմանական կառավարչական որենքներից, հնոցապաններին ուսուցանող Յեռյակի այն հրատարակություններից, ովրոնք ձեռքիս տակ՝ եմ ունեցել շոգեկաթսաներին հսկող Ընկերությունների 1919 թ. համագումարի և մեր կառավարության վորոշումներից, վորոնք վերաբերում են այս խնդրին:

I ՏՈԳԵԿԱԹՍԱՅԻ ՀՆՈՑԸ

Շոգեկաթսայի հնոցը հարմարեցվում է վառելանցութիւն, վոր լինում ե կարծր, հեղուկ և գալաքին: Հնոցները կոչվում են ներքին կամ արտաքին, նաև թե ինչպես են զետեղված կաթսալի մոտ: Սրանցից ամեն մեկը ունի իր առավելությունները և թերությունները: Ներքին հնոցները գլխավորապես հեղուկ և գալաքին վառելիքների համար են, վորոնք առլով մեծ կալորիական ջերմություն, քիչ տեղ են պահանջում: Սրանց չափերը չե կարելի կամ այսպահանքներն մեծացնել կամ փոքրացնել, վորովհետև նրանք կաթսալի չափերի հետ կապված են: Այս հնոցները պիկելի խնայող են, վորովհետև շրջապատված լինելով համարյա թե բոլոր կողմերից, կաթսալի տաքացման մակերեսով, ճառագայթների արտացոլումից քիչ տարություն են կորցնում, մինչդեռ արտաքին հնոցները շինվում են կարծր վառելանլութերի համար, վորոնք քիչ կալորի ունեն, հետեւապես ալդ վառելանլութեց ավելի մեծ քանակությամբ պետք և ալրել նույն արդյունքը ստանալու համար, ուստի և հնոցը մեծ չափեր պետք և ունենաւ: Բացի գրանից նաև ավելորդ տեղ և բանում ու շինված լինելով կաթսալից զուրու, կորցնում և ճառագայթների արտացոլումից մեծ քանակությամբ տաքություն: Սրա առավելություններից գլխավորն այն է, վոր կարելի յի հնոցը շինել մեր շանկացած չափերի, բառնալ մեր կամեցած քա-

նակությամբ վառելանլութով ու հետևապես ստանալ կալորիսակավ վառելիքից բարձր ջերմություն:

Հնոցը պետք է համապատասխանի կաթսացին առաջաղըած պահանջներին՝ առանց մանումեարի ոլաքի մեծ տատանումների, արտազրի այնքան շողի, վորքան պահանջում և արտադրությունը: Հնոցը պետք է շինվի շոգեկաթսացի սիստեմի, նրա տաքացման մակերեսի չափերի, վառելանլութի տեսակի, գործազրվելիք շոգու քանակության պահանջների համաձայն: Նախ խոսենք ներքին հնոցների մասին, վորտեղ նավթ կամ մազութ և ալրվում:

Հնոցագլանավոր շոգեկաթսաների մեջ վառելիքը ալրվում է կաթսացի միջի խոզովակածե մասում, վորը կոչվում և հնոցագլան: Հեղուկ վառելիքը բերվում է առանձին խողովակով դեպի հնոցագլան, ուր վորտեղ նավթ կամ միջոցով փոշիանալով ալրվում է:

Նավթը կամ մազութը ալրվելով տալիս են բարձր ջերմություն (մոտ 1000° մինչև 1200° Ց), Շոգին այդ տաքությունից տարրալուծվում և ջրածինի և թթվածինի, իսկ թթվածինը՝ ինչպես հայտնի է, ժանդանեցնում և լիրկաթթը ու նրա փչացման պատճառ դառնում: Վորտեսազի այդ լիրեռութից խուսափեն, հնոցագլանի լիրկաթթա պատերը շեմքից սկսած, մոտ 2 մետր խորությամբ, ծածկում են հրակացուն ալլուսով: Նավթը մինչև շոգեկաթսացի հնոցը մացնել, պետք և տաքացնել մինչև նրա բունկման ասաթճանը, վորտեսազի ջրիկանա, հեշտությամբ հոսի խողովակներով ու ալիքի լավ փոշիանա:

Նավթը, իրի վառելիք, ունի ի միջի ալրոց և

հետեւալ առավելությունները: ալրման ժամանակ հեշտ և կանոնավորել նրա քանակությունը, հնոցին սպասավորել պահանջում է մինիմալ հակողություն, այբումը կատարվում է անընդհատ և հավասարապես, ողի հետ նավթը խառնվում է լավ, ու իերբ ողի քանակը պահանջի հետ չափավորած է, վառվում է թեթեվ, բոլորվին թափանցիկ ու հաղիկ նշմարելի կապտագույն ծխով ու մոխիր չունի:

Այն սարգածքը, վորը դրված է լինում կաթսացի վրա և ծառայում է հեղուկ վառելանլութը փոշիացնելով՝ ողի հետ խառնելու և նախապատրաստելու ալրվելու համար, կոչվում է փորսունկա:

Փորսունկաները լինում են շատ տեսակ—սկսած ամենապարզից, վորը մի չորս անկյունանի հասարակ թիթեղից շինած, մոտ 30 միլիմետր խորությամբ մի տաշտ և, ուր կաթկաթում է մազութը ու ծխալով վառվում, վարակելով շրջակացքի ողը, մինչև ամենակատարյալ փորսունկան, վոր գործադրվում է կովկասում նավթ-ալրվունաբերական շրջանում, աշխատում և առանց խոտացած ողի կամ շոգու, մինիման պոմպի ձնշումով, վորը հասնում է 4—6 մթնոլորտալին ձընշման: Նավթը կամ մազութը մոտենալով նավթատար խողովակի վերջին, մտնում է մի մուշտուկի մեջ, վորտեղ զետեղված և նավթի փոշիացնող սարքը, մոտ 20 աստիճան թեք ակոսիկներով ու պոմպի ձնշման ալրեցության տակ փոշիանում է: Այս փորսունկաների առավելությունը կայտնում է նըանում, վոր աշխատելով առանց շոգու, նրանք քիչ աղմուկ են բարձրացնում շոգետան բաժնում, համեմատելով բոլոր գոյություն ունեցող մլուս փորսունկաների հետ, տա-

լիս են՝ վառելիքի 12—15 տոկոս ։ Խնայողություն, բայց պահանջում են ավելի ուշադրություն, քանի ոտքը վորական շոգու ֆորսունկաները։

Կարծր վառելանյութերի հնոցները լինում են մի քանի տեսակներ՝ հորիզոնական կրակավանդակով, թեք, շարժական վանդակով, խճաչնոց և այլն։ Այս տեսակ հնոցներից ամենապարզը հորիզոնական կրակավանդակովն է, վորը շինվում է չուգունից թափված լերկար ձողերից։ Այս ձողերի այն կողմը, ուր կատարվում է նկութի ալրումը, ավելի հասու և քանի հակառակ կողմը, վորը հեշտացնում է մոխրի ներքի թափվելը։ Սրանք ունեն մի կողմից զուրս ցցված սեպածն մի մարմին, վորը խանգարում է ձողերին միմիանց սեղմ զնելուն ու մի նեղ անցք և թողնում, վորտեղից ներս և մտնում հնոց, վառվելու համար անհրաժեշտ ողի քանակը։

Վանդակը պետք է շինված լինի այն հաշվով, վոր առաջացած ժամանակը վառելանյութի ծանրությունից չկունա, վառելանյութը ներքի չթափվի, մոխրը հեշտառթամբ արանքներից իր տեղն ընկնի և վոր ամենապիտագորն է՝ անհրաժեշտ քանակությամբ ող ներս թողնի։

Լավ, կատարելագործված հնոց համարվում է այն տեսակը, վորի վառելիքը ներածելը կատարվում է մեխանիկորեն, իսկ վանդակը, ուր կատարվում է նկութի ալրումը, բաղկացած է իրար հետ միացրած, կարճ ձողերից։ Վանդակի աշխատող մասի սկզբում ու վերջում գետեղված են մեկմեկ թմբուկ, վորոնցից առաջնը պատվելով շարժում է վանդակը և լերկորորդը թմբուկը։ Ամբողջ սիստեմի շարժումը այնպիս:

Ե հաշվի առնված, վոր վառելիքը ընկնելով վանդակի վրա նրա սկզբում, մինչև լերկորդ թմբուկին հասնելը ամբողջովին ալրվում է, իսկ այրվածքի մնացորդները վանդակի վերջում հանդիպելով պատվարի, նրա վրայով բարձրանալով թափվում են մոխրանոցը։

Ամբողջ վանդակը իր թմբուկներով զետեղված և անկիւների վրա, վոր կարիք լեզած զեպքում ամբողջովին հեշտությամբ դուրս քաշվի։

Ի վերջո կանգ առնենք խինձի հնոցը լերկի վրա, վորոնք շինվում են հատկապես արժան վառելանյութերից վարափի, տորփի ու հնդի կեղեգի համար։

Այսպիսի հնոց շտեղկաթաւի առաջ զետեղերու համար անհրաժեշտ ունենալ բավական տեղ։ Վառելանյութի ալրումը կատարվում է այնտեղ թեք վանդակի վրա, վորի շերտի հաստությունը լինում է՝ փայտի համար 800—1000 մ/մ, իսկ տորփի ու հնդի կեղելի համար 300—400 մ/մ։ Վառելու համար պահանջված ողի քանակը ներմուծվում է կըրակակալի վանդակի արանքներով, հնոցի լերկու կողքերի պատերի ալրում շարժածքում թողած անցքերով, ու վառելիք ներածող անցքով՝ վառելանյութի հետ։

Այս հնոցները նույնպես ունեն իրենց առավելությունները և թերությունները։ Առավելությունները նրանք են, վոր ողը վառելանյութին հասնելուց առաջ, հնոցի մեջ, նրա մեծ արածության պատճառով տաքանում է, գագերը մինչև շոգեկաթսայի հետ շփելը ամբողջովին ալրվում են և վերջապես հնոցի ներսում վառելիքը պակասելու դեպքում, հնոցի շի-

կացած ազգութիւն պատերը արտացոլելով իրենց մեջ ամբարած տաքությունը, թուզը չեն տալիս հնոցի միջի տաքության շատ ցածրանալուն, վորի հատեանքով շոգեկաթսան հավասարապես և տաքանում ու նյութն ամբողջովին արգում:

Թերությունները նրանք են, վոր հնոցը բռնում և մեծ տեղ, արժե թանգ, սկզբում վառելը—հնոցը տաքացնելը մեծ քանակությամբ վառելանլութ և ծախսում, հնոցի աշխատանքի շատ կանգնեցնելը դժվար է:

Նյութի ամբողջովին արցիւլը կախված և գրւիս պարապես հնոց ներս մուծվող ողի քանակից: Հաճախ կարիք և լինում ողի քանակը հնոցում արհեստական կերպով շատացնելու, վորպեսզի կարելի լինի վառելիքի պահանջվող քանակը արել: Այդպիսի փշող հարմարություններ զնում են առավելապես անդրացիտի ու ցածր վորակի ածուխի հնոցներում: Փչումը կատարվում և շոգու կամ ողի միջոցով, վորը փշում և կրակակալ վանդակի տակը վեհափլատորի միջոցով:

II. ԱՅՐՈՒՄՆ

Հնոցում վառելիքի արցիւլու պրոցեսը կայանում և նրանում, վոր վառելանլութի մեջ լեզած արցիւլ մասերը՝ ածխածինը, ջրածինը, ծծումբը միանում են ողի թթվածնի հետ, առաջ են բերում լուցս ու տաքություն: Վորպեսզի վառելանլութը սկսի վառվել, բռնկվի, անհրաժեշտ և նրան վորոշ աստիճան տաքացնել: Վառելիքի տաքացման այն աստիճանը, իեր նա սկսում է արցիւլ, կոչում և բռնկման աստիճան:

Այս բռնկման աստիճանը զանազան վատելաւնյութերի համար տարբեր և փայտի համար նա հավասար է 300⁰ Ց. քարածուխի համար 325⁰ Ց. ու նավթի համար 100⁰ Ց.:

Ինչպես ասացինք ալբումը առաջանում և վատելանյութի ալցիվող մասերի՝ ողի թթվածնի հետ միանալուց: Թթվածնի մեջ լեզած ամբողջ տաքությունը կրածանվի նրանից միայն այն գեղքում, իեր վառելիքի ամբողջ թթվածինը կացվի, վերածվելով ածխաթթվութիւն:

Վառելանլութի ալբում համար անհրաժեշտ թթվածինը ստացվում և հնոցում նրա մեջ մտած ողից, դրա համար ել պետք և հնոց ներս թողնել այնքան ող, վորքան անհրաժեշտ և տվյալ նյութի կատարյալ ալբեցման համար, ու այս խնդիրը պետք և լինի լավ հնոցապանի առանձին հոգսի առարկան: Յեթե թթվածինը հնոցից գուրա գա տանց արցիւլու, ու ծիփ նման, նշանակում և նյութի ալբումը կատարվում և վոչ լրիվ, վառելիքի վորոշ քանակությունը կորչում և առանց սպառագործման:

Յեթե հնոց մտցնենք ավելի ող, այսինքն թթվածին, քան անհրաժեշտ և, նրա ավելորդ մասը չի արցիւլ, միայն կիսվի արցիւլ գաղերից նրանց տաքությունը ու իր հետ ծխանով գուրս կտանի: Պարզ և ուրեմն, վոր լեթե ուղում ենք, վոր վառելանլութը կատարելապես արցիւլ հնոցում, ողի քանակը պետք և լինի բավական ու նյութի հետ լավ խառնված և տաքության ասաթճանը պետք և լինի այնքան բարձր, վոր վառելանլութի բոլոր արցիւլ մասնիկներին տաքացնի մինչև բռնկման աստիճանը:

Ասածներիցու պարզ պետք և լինի ամեն մի հնոցավանի համար, թէ փորբան մեծ գեր և խաղում հնոցի այրեցման մեջ ողի քանակը, վոր հնոցավանը ըստ պահանջի կարող և շատացնել ու պակասեցնել:

Ողը հնոց և մանում կաթսարատան և հնոցում շեղած ճնշումների տարբերությունից: Վորբան մեծ լինի այս տարբերությունը, այնքան շատ ող կանցնի հնոցը: Աւրեմն անհրաժեշտ և, վոր հնոցավանը ըստ պահանջի՝ այս տարբերությունը ուժեղացնի կամ պակասացնի: Անհրաժեշտ և ողի քանակը ուժեղացնել յերբ կրակակալ վանդակիլ ներ բեռնած և վառելիքով ու ընդհակառակը, պակասեցնել, ծածկելով ծիանցքի գոնակը, յերբ վառելանութը այրվելով պակասում և, վանդակը բացվում ու ազատ ներս և թողնում ողի հոսանքը:

Վառելանչութիւն կատարված այրեցման համար մեծ նշանակություն ունի նույնակես կրակակալի վրա բարձած նյութի շերտի հաստությունը: Նայած նյութի վորակին, այդ շերտը կարող և հաստ կամ բարակ լինել, վոր ողի հետ լավ խառնվի ամբողջովին այրվելու համար: Վորբան վառելանութը խոշոր և, այնքան կրակակալ վանդակը կրակիլ լինաստ շերտով բեռնել, վորովհետեւ խոշոր կառների մեջ մեծ անցքեր են մընում ու հեշտացնում են ողի ներս թափանցելը, և ընդհակառակը, վորբան մանր և վառելիքը, այնքան բարակ պետք և լինի նրա շերտը, վոր ողը կարողանա ներս անցնել: Վառելիքը կրակակալ վանդակի վրա պետք և մատակարարվի բարոր աեղերում հավասար շերտավ, վորովհետեւ այն տեղերում, վորտեղ նաքիչ և, շուտ և այրվում, վանդակը բացվում և ու

ներս և թողնում մեծ քանակությամբ որ: Ի՞նչքան մեծ լինի ողի հոսանքի արագությունը հնոցում, այնքան վառելիքի շերտը պետք և հաստ լինի, վորպես զի ողի և վառելիքի շիման ժամանակամիջոցը յերկարի: Վառելիքի շերտը չպետք և լինի և շատ հաստ, վորովհետեւ ողի պակասությունից կատացվի վոչ լրիվ այրումն, վորի հետեւանքը կարող և լինել գաղերի պակասությունը ծխանցքներում:

III. ՇՈԳԵԿԱԹՍԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ամեն մի շոգեկաթսա ունի հետեւալ անհրաժեշտ և գլխավոր մասերը:

1. Զրային տարածություն—կաթսալի այն մասն և, վորը լցված և լինում ջրով: Յերբ անհրաժեշտ և լինում կաթսալի աշխատանքի ըրջանում կամ այդ ըրջանի կարձ ընթացքում մեծ քանակությամբ շոգի արտադրել—ջրային տարածությունը պետք և լինի ըստ կարելուն մեծ: Զրային տարածությունը պետք և լինի փոքր, յերբ շոգեկաթսալի աշխատանքը հաճախ ու յերկար ժամանակ ընդհատվում և կամ յերբ անհրաժեշտ և լինում կարձ ժամանակամիջոցում շոգեկաթսալում պահանջված ճշշումը ստանալ:

2. Շոգետուն—շոգեկաթսալի այն մասն* և, ուր շոգին ջրից լատանվելով ամբարվում ե: Այն զեպքում, յերբ շոգին սպատակություն և ընդհատումներով մեծ քանակությամբ, այս մասը պետք և համապատասխան մեծ լինի:

3. Շոգեգմբեթ—վորը գտնվում և կաթսալի ամենաբարձր մասում ու նայած կաթսալի չափին, ունի վորոշ լուրջություն: Սրա դերը կայանում և նրա

նում, վոր ջրալին մակերեսից շոգու հետ բարձրուցած ջրալին մասնիկները բաժանի շոգուց, վոր շոգետար խողովակներում շոգին ըստ կարելույն ջրից ազատ և չոր լինի:

Յերբ արդյունաբերության ընուլիթը պահանջում է արտադրել մեծ քանակությամբ շոգի և կաթսան ուժից տաքացվում է, այդ շոգին լինում է ավելի թաց ալիքնքն՝ ջրի տոկոսը նրա մեջ ավելի մեծ է, վորից տպատկելու համար շոգետար խողովակների վրա դընում են ջրաբաժանիչ պուլտ կամ անմիջապես շոգեկաթսայի հետեւ ծխատոր անցըռում դնում են զերտների, վորը անցնող գաղերով տաքանում ու թաց շողին չորացնում է:

Շոգեկաթսաները բաժանվում են յերեք գլխավոր տեսակների՝

1. Մեծ ջրատեղով կաթսաներ.
2. Ջրախողովակավոր կաթսաներ.
3. ծխախողովակավոր կաթսաներ:

I. ՄԵԾ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՎ ԿԱԹՍԱՆԵՐ

Կաթսաների այն տեսակները, վորոնք բաղկացած են միայն մի գլանից, կոչվում են գլանածե կաթսաներ:

Այս կաթսաների հնոցները գետեղված են լինում կաթսայի տակը, հիմքի մեջ, վորի վրա դրված և լինում կաթսան: Այրեցման գաղերը, նայած կաթսայի մեծության, անցնում են մեկ կամ մի քանի ծխանցքերով գեպի ծխանը:

Այս աեսակի կաթսաների թվին են պատկանում մեկ և յերկու հնոցագլան ունեցող կաթսաները, վո-

լոնցից առաջինը կոչվում է կորնվալյան կաթսա, իսկ յերկրորդը՝ լանկաշիրյան կաթսա: Հնոցագլանները լինում են համեմատաբար մեծ չափերի, զետեղված են կաթսայի մեջ ու միաժամանակ ապահովում են արտաքումը, ներսը մաքրելու համար անհամեմատ ավելի հարմար են, ծխանի լավ քաշելու զեպքում ունեն շոգու մեծ արտադրումն, լավ քաշելու զեպքում ունեն շոգու մեծ արտադրումն, միայն պահանջում են մեծ տեղ:

2. ԾԽԱԽՈՂՈՎԱԿԱՎՈՐ ԿԱԹՍԱՆԵՐ

Ծխախողովակավոր կաթսայի հնոցը ընդհանրաց միացած և կաթսային և գտնվում է կաթսայի ներսում: Այրվաղ գաղերը հնոցից մտնում են մեծ ներսում: Այրվաղ գաղերը հնոցից մեջ, վորոնցից դուրս քանակությամբ խողովակների մեջ, վորոնցից դուրս գաղով անցնում են ծխանը: Ծխախողովակներն անցնում են ջրալին արածության միջով ու տաքացնում ջուրը:

Խողովակները հաճախ պետք է մաքրել հատուկ պողպատի խողանակով, վորովհետև ալրման գաղերը իրանց հետ տանում են մուր ու մոխիր և լցնում են խողովակների անցքերը:

Այս սիստեմի կաթսաների առավելությունը՝ նըրարանումն է, վոր քիչ տեղ բռնելով, ունեն մեծ տաքացման մակերես, վորը նպաստում է արագ շոգեցցման:

3. ՋՐԱԽՈՂՈՎԱԿԱՎՈՐ ԿԱԹՍԱՆԵՐ

Ջրախողովակավոր շոգեկաթսաները բաղկացած են յերկու մասից՝ խողովակներից (վոր լցված են լինում ջրով) և գլանից, վորի մի մասը նույնպես ջրով

և լցված, իսկ մյուս մասում հավաքվում ե շոգեն: Խողովակների լերկու ծալրերը ամբացրած են խցիկներում: Այս ջրային խցիկները և վերեվի զլանը միացրած են լինում միմիանց կարճ խողովակներով: Բոցը և զաղերը լինում են չորս կողմից բոլոր ձբով լիքը խողովակները ու զլանի ներքեի մասը:

Այս կաթսան նույնպես քիչ տեղ և րոնում, ունի տաքացման մեծ մակերես, շթաքարից խողովակները մաքրելը անհարմար և ու մեծ ժամանակ և խլում:

IV. ՇՈԳԵԿԱԹՍԱՅԻ ԱՐՄԱՏՈՒՐԱՆ.

Արմատուրան ծառայում և շոգեկաթսան ճիշտ սպասարկելու համար և այս պատճառով արմատուրան պետք և պահպի մաքուր ու աշխատի անսխալ, վորովհետեւ արմատուրայի անստուգությունը, անձըշտությունը կարող և շոգեկաթսայի փշանալու պատճառ լինել ու կանգնեցնել ամբողջ արդյունաբերությունը շոգի շինելու պատճառով:

Ամեն մի կաթսա, վորի մեջ շոգու ճնշումը կես ատմոսֆերից ավել է, պետք և ունենա հետեւալ արմատուրան:

1. Ջրացուց հարմարություններ.

Կաթսայի վրա պետք և լինի դրված ջրի ամենացածը մակերեվութիւնը ցուցիչ վորից ցածր ջրի մակերեվութիւնը վատանգավոր և ու անթուլպատրելի: Դրա համար շոգեկաթսայի աշխատանքի ժամանակը հնոցալանը պետք և ամեն մի սոպե իրապեկ լինի կաթսայի միջի ջրի բարձրությանը: Ցերեւ ջրի բարձրությունը նշանակածից ցածր լինի, հնոցալանները

ջրից զուրս կրան, տաքությունից կկարմրեն ու շոգեկաթսան կարող և պայթել, իսկ լիթե ջուրը շոգեկաթսայի մեջ թուլատրածից բարձր լինի, կրոնի շոգու տեղը, շոգու արտադրությունը կարկասի, կաթսայի միջի ճնշումը կընկնի, և լիթե շատ բարձրանա, կարող և անցնել շոգեատր խողովակների մեջ ու խանգարել արտադրությունը: Վարպեսզի հնոցալանը տեսնի շոգեկաթսայի միջի ջրի բարձրությունը, կաթսայի վրա գրվում են ջրացուց ապակի և սուուզման ծրակներ: Ջրացուց ապակու միջոցով տեսնում են ջրի բարձրությունը կաթսայի մեջ, իսկ ջրացուց ապակու վշանալու դեպքում ոգովում են սուուզման ծրակներից, վորսոցից ներքեվինը գրված և լինում ջրի ամենացարծ մակերեվութիւնի գծի վրա, իսկ վերեվինը կաթսայի շոգու բաժնում:

2. Սնուցիչ սուրվածներ.

Շոգեկաթսան սնելու համար, ջուրը անցնում և ջրաբեր խողովակներով ու մնուցիչ վականի միջով լցվում և կաթսան:

Մնուցիչ վականի կառուցվածքի առանձնահատուկությունը կախանում և նրանում, վոր նա ջուրը ներս և թողնում կաթսան, բայց կաթսայից զորս չի թողնում: Բացի մնուցիչ վականից, կաթսայի և սրա արանքում գրվում և և մեկ կափուլ, վորից ոգովում են մնուցիչ վականի վշանալու դեպքում:

Ամեն մի շոգեկաթսա, վոր ունի 10 քառակուսի մետրից ավելի տաքացման մակերես, կամ աշխատում և 6-ից ավելի մինուլորդային ճնշումով, պետք և ունենա վոչ պակաս քան մերկու մնուցիչ սուրվածներ, վորոնք աշխատավայրի միջնական անկախ: Ցերկու մնու-

ցիչ սարվածներ համարվում են բավական նույնպես և մի քանի կաթսաների համար, վորոնք գտնվում են միենուն շենքում, ինթե միայն ամեն մի սնուցիչ առանձին կարող ե սնել կաթսաների տվյալ խումբը:

Ծոգեկաթսացի մեջ անընդհատ ջուր մզելու համար գործ են ածում կամ պոմպեր կամ ինժեկտորներ: Առաջինները աշխատում են անհամեմատ լավ քան յերկրորդներ, փորոնք համարի վատ են աշխատում, շուրջուտ փչանում են ու պահանջում են գիտակցական և ուշադիր սպասարկում:

Ծոգեկաթսաներին ջուր մատակարարող մեքենաները պետք ե ունենան պոմպերը կրկնակի, իսկ ինժեկտորները յեռակի կարողություն, քան պոմպան ջում և կաթսաների ջրի սպառումը:

3. Զերարդ կրան.

Յուրաքանչյուր շոգեկաթսա պետք ե ունենա ջրաթող կրան, կաթսան պարբերաբար նստած ցեխից և աղտերից մաքրելու կամ աշխատանքը կանգնեցնելու զեպքում ջուրը բաց թողնելու համար: Այս կրանը գրփում և շոգեկաթսայի ամենացածր տեղում, փորսկեացի ամբողջ ջուրը կարողանա դուրս հոսել:

4. Մաճումեա.

Ծոգեկաթսացի պատերի հաստությունը անում են համապատասխան այն ճնշման, վորով պիտի աշխատի կաթսան, ուրիշ խոսքով, կաթսան առանց վրնասվելու աշխատունակ և պահելու իր մեջ շոգու այն ճնշումը, վորը թուլարված և պահել նրա մեջ աշխատանքի ժամանակ: Յեթե շոգու ճնշումը կաթսայի մեջ անցնի թուլարվածից, կաթսան կարող ե պայթել, մեծ ավերածություն պատճուռ լինել ու սպանել,

լավագույն զեպքում՝ հաշմանդամ դարձնել մոտ յեղողներին, արդյունաբերությունը կանգնեցնել մինչև նոր կաթսու գնելը ու նրան տեղումը սարքավորելը: Անտ սրա համար կաթսայի ճակատին, շոգու բաժնի վրա, սիֆոնաձև խողովակով գրված և լինում մանումետրը, վորի սլաքը թվացուցի վրա նշում և շոգու ճնշումը կաթսայի ներսում: Մանումետրի ապակու վրա կարմիր գծով նշանակված է լինում տվյալ կաթսայի համար թուլարված ամենաբարձր ճնշումը, վորից յերրեք չպետք և տնցնի մանումետրի սլաքը:

5. Ապահովիչ փական.

Ծոգեկաթսայի ամենակարեվոր արժատուրան ապահովիչ փականներն են և հենց դրա համար ամեն մի շոգեկաթսա իր վրա պետք ե ունենա դրանցից վոչ պակաս քան յերկու հատ: Այն զեպքում յերբ մանումետրի ցուցածը ճիշտ չե ու կաթսայի մեջ շոգու ճնշումը անցել և թուլ տվածից, ապահովիչ փականները ազգանշան են տալիս, ազմուկով բաց թողնելով շոգին, մինչև ճնշումը հասնում և թուլտված չափին, մինչև ճնշումը հասնում և իրենց կրկնակի դերը:

Ապահովիչ փականների ծանրոցները պետք և պինդ ամրացրած լինեն լծակների վրա: Վոչ մի զեպքում չի թուլլարվում ճնշուապանին կամորեն ավելացնել լծակների վրայի ծանրությունները կամ տեղափոխել նրանց:

6. Շոգու կափուց.

Կաթսայի մեջ գոյացած շոգին արտադրության վայրը ուղղելու համար, շոգեգմբեթի հետ միացնում

են շոգեատր խողովակազիծը ու վերջինի վրա զնում
են շոգու կափուրը, վորով և կանոնավորում են շո-
գու մատակարարումը:

Վ. ՀԱՌԱՊԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հնոցապանի կոչումը կայանում է նրանում, վոր
հիշա սպասարկի շոգեկաթսալին: Նա պետք է ան-
թարթ հետեւ շոգեկաթսալի ջրացուցի ապակուն,
ստուգիչ ծորակներին, մանոմետրի ու ապահովիչ փա-
կոնների կանոնավոր աշխատելուն, վորովհետև որ-
բանք ժառանաւ են հնոցապանին կաթսալի սպասա-
վորման ժամանակ իրեն ողեցուցներ:

Հնոցապանը հերթը ընդունելուց պես ե հա-
մոզվի, վոր ուղեկարսան իր բոլոր արմատուրայով
կարգի լի: Դրա համար նա իր նախորդի հետ պետք
է փորձի ջրացուց ապակիները և ստուգիչ ծորակները,
շոգիով միշտ մանոմետրը, ապահովիչ փականները,
ստուգի ջրաթող կրանը ու շոգու կափուրը, պարզի
հնոցի ու կրակի բոցի անմիջական ազդեցության տակ
գտնված կաթսալի մասերի գրությունը, ու նկատած
թիրությունների մասին խոկույն հայտնի կաթսալա-
տան բաժնի պատասխանատու անձին: Ազս բոլորը
անհրաժեշտ ե կատարել նրա համար, վոր հնոցապանը
պարզի իր համար շոգեկաթսալի ու նրա արմատու-
րայի գրությունը և դժբախտ պատահարի գեպքում
պատասխանատու չլինի իր նախորդի անբարեխզու-
թյան համար: Անկախ սրանից շոգեկաթսալի արմա-
տուրայի հաճախակի փորձելը անհրաժեշտ է, վորով-
հետեւ, իրը արմատուրան հաճախ չի փորձվում, շիտ-
քարը նստելով արմատուրայի վրա ու լցվելով նրա
արանքները, իուզում, դժվարացնում է, իրբեմն մին-

չի անգամ անկարելի դարձնում նրանց բանալ— փառ
կելլը: Ուստի և նրանց կարգի գցելու համար պետք ե
լինում ավելորդ աշխատանք գործադրել, քանդել ու
մաքրել, մի բան, վոր հաճախ կաթսալի աշխատանքի
ժամանակ անկարելի լի:

Հերթապահությունը ընդունելուց հետո հնոցա-
պանը վոյ մի գետքում, ամենակարև ժամանակով
անգամ, շպես և հեռան կարսանից, բանի վոր
հնոցը վառվում է: Ցեղե անհրաժեշտ լինի նրան
կարձ ժամանակով, կամ հիվանդության դեպքում, հե-
ռանալ կաթսալից, նա պետք է նախորդը հայտնի
կաթսաների համար պատասխանատու անձին ու երբ
հնոցապանին փոխարինովը ստանձնի հերթը, այն
ժամանակ միայն նա կատու և հեռանալ կաթսանից:

Շոգեկարսան, եռա արևատուրան լեզ կարսայա-
տունը պեսէ և միօտ լինեն մաքուր: Արգելվում է դնել
կաթսայատանը ավելորդ, նրա սարվածքին կամ կաթ-
սալի սպասավորման չվերաբերող իրեր, վորպիսզի
ավելորդ տեղ չըսնեն ու հնոցապանին չխանգարեն:

Մերգելվում է ուսարների ու կարսայատանը զած
չունեցող ծառացողների մուտքը կարսայատուն: Աը-
րանք մտնելով կաթսայատուն խոսեցնում են հնոցա-
պանին, գրավում են նրա ուշադրությունը, վորը
պետք է ամբողջովին կենտրոնացած լինի կաթսալի
վրա, նրան գործից հետ են զցում: Ուսար մարզիկ
շար գիտավորությամբ կարող են կաթսալին ել վը-
նասել:

Արգելվում է կաթսայատան դուռը ներսից փա-
կել, վորպիսզի ներսում լիդողները վատանգի գեպքում
կարողանան անարգել դուրս փախչել:

Գործարանում պատահած երգեհի կամ ուրիշ գործախուրյան զեպքերում հնոցապանը պետք է մնա կարսայատանք: Յերե երգեհը սպառնում է կարսայի շեթին, պետք է իսկույն կանգնեցնել կարսայի աշխատանքը՝ հանգցնել հնոցը, փակել ծխանցքի սողնակը, բարձրացնել ապահովիչ փականների ծանրոցները ու կաթսալի մեջ լեզած շոգին բաց թողնել կաթսալուուն ու ջրով ուժեղ սնել կաթսան, ծածկել վտանգը սպառնացող կողմից շենքի դռւն ու լուսամուտները: Յեթե թողնենք հնոցը վասած ու կաթսան ճնշման տակ, հրդեհի կաթսալուուն անցնելու դեպքում, շոգեկաթսալի պայմանն անխուսափելի կլինի:

Հերբ վերջանալուց հետո հնոցապանը հերքապահուրյունն հանձնում է հետեվյալ իր ընկերին, յեվ յերբ վերջինը հավաստիանում է բոլոր սարվածերի կարգին լինելուն, ու ընդունում ուզգեկարսան, հնոցապանը նոր միայն հեռանում է ուզգեկարսայի շեթից:

Հերթի ալսպես հանձննելուց հետո, յեթե շոգեկաթսալին կամ նրա արմատուրալին մի փորձանք պատահի, նախորդ հնոցապանին արառավորել չի կարող:

Ս.Մ.Ի. մի հնոցապան պարտավոր է լավ զիտենալ ուզգեկարսայի սպասավորման վերաբերյալ հաւաքակած բոլոր ու ենթերեր, նամանավանդ 1919թ. փետրվար ամսին կարսայահոկից ընկերուրյունների 1-ին համագումարում ընդունված կանոնները, վորովհետև ամեն մի հնոցապան պատասխանատու յետուր հսկողության հանձնած շոգեկաթսալի ամբողջություն ու անվտանգության համար, ու գժրախու-

թյան գետքում անդամ դատարանի առաջ, վորը ուրենք չփառնալը իրը արդարացում չի ընդունում: Հնոցապանից ե կախված կաթսալի անվտանգ աշխատանքը: Յեթե հնոցապանը բարեկիրդը ու ուշադիր ե ու ծառորեն կատարում է կաթսանների սովասավորման վերաբերյալ բոլոր որենքներն ու նախազգուշացացումները, կաթսանների անվտանգության պատասխանատու անձի բոլոր կարգավորությունները՝ շոգեկաթսան յերբեք չի պայմի ու նրա աշխատանքի տեկողությունը կերպի: Ընդհակառակը՝ կանոններ չիմանալը, անուշադրությունը, հերթի ժամանակ քնելը, պատասխանատու անձի աշխատանքին վերաբերյալ կարգագրությունները չկիրառելը, միշտ կաթսալի պայմեննի, հետեվյալն և մարդկարին զոհերի պատճառ կարող է լինել:

VI ՇՈԳԵԿԱԹՍԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Շոգեկարսան ցորք լցնելուց առաջ հնոցապանը պետք է սուլգի, թե իրավես կարսան լավ մարդ է մրից, օրաբարից, համոզվի վոր կարսայի մեջ մարդիկ չկան ու վոյ մի գործիք կամ ուրիշ իր մոռացմանք չի բողնվել: Ս.հնամը պետք է փորձի կարսայի ամբողջ արմատուրան, սնիչ սարվածները, ծորակները, ցացուց ապակին, ապահովիչ փականները, մանուկները, ցարուկ կրանք, կափուցը յեվ համոզվի, վոր երանք աշխատում են անխափան: Սուլգի կարսայի շարքածիք ամբողջուրյունը վոր եւկվածներ յունենա, յեվ ուզետար զծի վրա գրած եկամիչ արգելակները, վոր սվյալ կարսան բաժանել են

միուսներից, հանված լինեն, այն ժամանակ միայն կարսան սկսի ջռով լցնել:

Շոգեկաթսալի մեջ մնացած շորի կտորները, տաշեղները կամ ուրիշ թեթև իրերը, բարձրանալով շնուցող ջրի հետ, կարող են անցնել արմատուրան կաթսալի հետ միացնող ծակերի մեջ և արգելել նըրանց կանոնավոր աշխատանքին, ծանր մասերը կարող են անցնել ջրաթուղ կրտնի մեջ, խանգարին նրա փակվելուն: Ամբողջ արմատուրան պետք և շթաքարերից մաքրած, չոր շորով շփած, մաքուր ու փայլան լինի, հեշտ փակվի ու բացվի: Մանոմետրի սլաքը, լեթի փշացած չե, պետք և լինի զերովի վրա, ապահովիչ փականների լծակները հեշտ բարձրանան ու փականը անշեղ իջնի լուր թամրի վրա, կաթսալի անցքերը ամուր փակած լինեն: Այս բոլորը կտառիլուց հետո հնոցապանը հանդիսա սրտով կարող է կաթսան լցնել ջրով ու փառել հնոցը:

Շոգեկարսան պետք է այնքան ջռուր լցնել, որ հնոցագլանեները ամբողջովին ջռով ծածկվեն ու ջռուր հասնի նորմալ բարձրության (մինչև ապահու կեսը):

Հնոցը պետք է վառեն միայն այն ժամանակ, յերբ կաթսան ջրով լցված ե, հակառակ զեղքում կաթսալի այն մասերը, վորոնք շփվում են բոցի կամ տաք գագերի հետ, կշիկանան, կարերը ու զամերը կքարքարվեն, կաթսան կսկսի ջռոր թողնել կամ առաջ կդան ավելի լուրջ խանգարումներ: Կաթսան ջռոր լցնելու ժամանակ ապահովիչ փականների լծակները պետք է բարձրացած լինեն, վոր կաթսալի միջի ողը դուրս գա և պետք է ծածկվեն այն ժամանակ, յերբ շոգի յերեփա:

Հնոցը վառելուց առաջ ծխանցիք սովորակը պետք է բացել յեզ, յերե կա զերացեախ, եւան յուր սողնակով բաժանել արեցման զավերից:

Առաջինը պետք է կտառարել նրա համար, վոր ծխանցքներում լեզու ալրզող զավերը ողի հետ ծխանով հեռանան, պայթյուն առաջ չըերեն, չվնասն կաթսալին ու չափերեն կաթսալի շարժածքը, իսկ յերկրորդը այն պատճառով, վոր զերաշնորհը չենթարկվի արքացման զավերի աղղիցության ու չայրվի:

VII ՇՈԳԵԿԱԹՍԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՅԵԼԸ

Վերեպ հիւման պայմանները լինի կատարելուց հետո, ուր կառելի յե վառել հնոցը: Շոգետար զօֆի գրած կափույցը պետք է պինդ փակած լինի, մինչեվ վոր կարսալի մեջ ուզու ենումը հասնի ամենաբարձր բուցտածած չափին ու մանումերի սլաքը հասնի կարմիր զօֆի:

Այս ամենը նրա համար է, վոր նախ ողը չանցնի շոգետար խողովակների մեջ, չտանի շոգեմեքենաներին ու պատճառ լինի նրանց անկանոն աշխատելուն և յերկրորդը՝ այն գեղքում յերբ մի քանի կաթսաններ շոգի ին մատակարարում մի ընդհանուր գծով, յեթե նոր գործի ընկնող կաթսալի շոգետար խողովակի վրա զբած կափույը բաց լինի մինչև այս կաթսալի ճնշումը թուզավածին հասնելը, բարձր ճնշում ունեցող կաթսաններից շոգին կմտնի այս կաթսան, առաջ կրերի մյուս կաթսանների մեջ շոգու ճնշումի անկում:

Հնոցը վառելը պետք է կատարվի դանգաղ, յերե կարսան լցված և սառը ջռով, իսկ յերե լցված և

տահացած ջրով հնոցի կրակը կարելի յէ համեմատաբար ուժեղացնել:

Ծոգեկաթսալի յերկաթը տաքությունից բնականորեն լայնանում և, լինչքան տաքության աստիճանը բարձր և լինում, այնքան ավելի շատ և լայնանում յերկաթը բոլոր ուղղություններով։ Կաթսալի այն մասերը, վոր կրակին մոտ են, շուտ են տաքում ու շատ լայնանում, իսկ հեռավոր մասերը ուշ են տաքում ու քիչ լայնանում։ և ինչքան կրակը ուժեղ և, այս ջերմաստիճանների տարբերությունը կաթսալի զանազան մասերի մեջ մեծ և լինում։ Բայց փորովհետեւ կաթսալի թերթերը միմյանց պինդ գամփած են, լայնացման աարբերությունից կարերը խանգարվում են ու սկսում են կաթել։ Անա այս պատճառով հնոցը պետք և վառվի մարմանդ, այն հաշվով, վոր մանումների սլաքը կարմիր գծին հասնի հնոցի վառելու սկզբից 5-6 ժամ հետո միախն։

Յերբ հնոցը վառվում և մարմանդ, կաթսալի բոլոր մասերը, պարբերաբար տաքանալով, հավասարապես են լայնանում ու փոխադարձաբար միմյանց հարմարվելով, միացումները ու կապերը չեն խանգարվում։

Յերբ շոգեկաթսան արդեն տաքացած և լինում, բայց գեռ շոգի չկա ու ապահովիչ փականները բաց են, պետք և կաթսալի անցքերի կափարիչների, ծուրակների, բոլոր կրանների, փականների և այն պըտուտակամայրերը ձգել, ամրացնել, վորովհետեւ պըտուտակամայրերը տաքությունից յերկարում են ու պատականացները թուլանում են։

Յերբ ապահովիչ փականներից սկսի շոգի բարձրանալ, դա նշանակում, վոր ջուրը արգեն յեռում և,

շոգի յէ գոյանում ու կաթսալի մեջ ազես ոդ չկա՝ այդ ժամանակ պետք և ապահովիչ փականի անցքը ծածկել, իջեցնելով նրա սնկինը յուր թամրի մեջ։

Ապահովիչ փականները ծածկելուց հետո հնոցալանը պետք և հետեւի մանումների ոլաքին և ջրացույց ապակիներին, վորովհետեւ սրանից հետո կաթսալի մեջ շոգին կուտակվելու յէ ու ճնշումը սկսելու յէ բարձրանալ, մանումների ոլաքը սկսելու յէ առաջ շարժվել և միաժամանակ ջրի մակերեսը, նրա շոգիացման պատճառով, ցածանալու յէ։ Պետք և ստուգի ջրացույց ապակիների ցուցածը ստուգման ծորակներով։ Յեթե մանումների ոլաքը չի շարժվում, նշանակում և վոր նա փշացած և, նրան պետք և իսկուն փոխարինել նորով, իսկ ինը տալ ուղղելու և հատուկ ապարատի վրա ստուգելու։

Ապահովիչ փականների մանրոցները իրանց լծակների վրա պետք դրված լինեն այնպես, վոր նըրանց գիրքը համապատասխանի կաթսալի թուլաւորված ճնշմանը, վորը նշված և մանումների թվացույցի վրա կարմիր գծով։ Յեզ յեթե այս պայմանը կատարված և, ապա մանումների ոլաքը կարմիր գծին հասնելուն պես ապահովիչ փականները պետք և բարձրանան, և ապահովիչ շոգին գուրս թողնելով աղղանշան տան։ Իսկ յեթե այս բանը տեղի չունենա, այդ մասին պետք և իսկուն հայտնել ձերենափարին կամ կաթսալի պատասխանատու անձին։

Մանումների ոլաքի կարմիր գծին հասնելը նշանակում և, վոր շոգում ճնշումը կաթսալի մեջ հասել և աշխատանքի թուլաւորված ամենաբարձր ճնշմանը, վոր տհուաչժու միայն կարելի յէ բաց տնել շոգիատար

խողավակների վրա գրած կափուլը: Այդ բանը պետք է կատարել զանգակ և զգուշ, շոփեար սառը խողավակները աստիճանաբար առքացնելու համար:

Սկզբուն էթե կաթսան դադարում և աշխատելուց ու շուրջ կափուլը փակում են, խողավակների մեջ մնացած շոգին սառչում, խտանում և ու ջուր դառնում, նույնպես և այժմ, յերբ շոգին անցնում և սառը խողավակների մեջ, եթի սառչում և ու ջուր զոյանում: Այս ջուրը պետք է անպայման խողավակների միջից գուրս թողնել նրա համար, վոր ջուրը շոգու ճետ առաջ զնալով, խողավակների մեջ աղմկալից հարվածներ և առաջացնում, խանգարում ու թուլացնում և նրանց միացնեները և, յերկրորդ ու ամենազլիսփորը այն պատճառով, վոր ջուրը շոգու ճետ մտնելով շոգեշարժ կամ մի այլ մեքենայի մեջ անպայման նրան կվնասի: Հաճախ այս նպատակի համար շոգետար գծի վրա զնում են ջրազտիչ պուշտ, վորը շոգուց զատում և ջուրը և շատ նպատակահարձար ե:

Նույն նպատակի համար շոգետար գծի ամենաշածը տեղում զնում են փոքր չափի մի կափուլը, վորը պարերաբար բաց են անում, զոյացած ջուրը բաց թողնելու համար:

VIII. ՀՆՈՑԻՆ ՀՍԿԵԼԸ

Հնոցի կրակավանդակը պետք է լինի միշտ մաքուր, նրա բոլոր արանքները՝ բաց, վորպեսպի վառելանյութի պահանջած ողի քանակը աղատ ներս թափանցի հնոց: Կարծր վառելանյութերը ալրվելով, թողնում են մոխիր—նյութի չայրվող մնացնրդներ,

վոր նստելով վանդակների վրա, բարձր տաքությունից հալվում, խարած են դառնում ու կպչում են վանդակներին և փակում նրա՝ ողի ներս թափանցման համար թողած ձեզքերը: Վորպեսպի հնոցը լավ վառվի, այս ձեզքերը հերթին 1—2 անգամ պետք և մաքրել հասուկ պատրաստած գործիքներով մոխիրից ու խարսմից:

Մոխրատունը պետք է մաքուր պահել, հավաքած մոխիրը պետք և դուրս տանել, վորովհետեւ վանդակի վրայից մոխրատուն թափված մոխիրը ու վառելանյութի ամենամանր թափվածքները յեթե թողնենք վոր կուտակվեն մոխրատանը, կրօնեն ողի անցքերը ու կխանդարին ողի նոսանքի ներս անցնենուն:

Հնոցը կարծր նյութով վառելիս պետք և կրակավանդակը բեռնել քիշ-քիշ կարճ ընդհատումներով, հավատար շերտով, նախորսք իջեցնելով ծխանցքի սողնակը:

Յերբ մի անգամից վանդակի վրա լցնում են մեծ քանակությամբ վառելանյութ, ողի հոսանքը անկարող և լինում ձեզքել այդ շերտը, վառելու համար պահանջվող թթվածինի քանակը հնոցի ներսում պահատում և, այրումը լինում և անկատար, ծխանից քուլա՛քուրա ու ծուխ և դուրս դալիս ու անտեղի ծախսիում և մեծ քանակությամբ վառելանյութ:

Եթե զեաքում, յերբ կրակավանդակը բեռնած և վառելանյութի վորպի համապատասխան հաստությամբ, ողը հավատարապես վոզում և նյութի ամրող շերտը, առաջ և բերում միապաղապ, ուժեղ ու լիակատար ալրումն ու վառելիքի կորուստ տեղի չի ունենում:

Ելանցքի սողնակը պետք և այնպես կարգավուրել վոր հնոց ներս մուծվի միայն ոդի պահանջվող քանակը, ուշերբ հնոցի գոները բանում են վառելիք ներս մուծելու, միշտ սողնակը պետք և իջեցնել հետեւալ պատճառով. Հնոցի դռները և ծխանցքի սողնակը միաժամանակ բաց լինելուց, ծխանցքների ուժեղ ձգման հետևանքով միանգամից հնոց և ներս խուժում մեծ քանակությամբ ոդ, սառեցնում և հնոցը ու կաթսացի այն մասերը, վորոնք գտնվում են ոդի հանապարհի վրա, առաջ և բերում կաթսացի մասերի մեջ ջերմությունների մեծ տարբերություն, վորի հետեւանքով առաջանում և կաթսացի կարերի քայլայումն ու կաթոց. Սառը ոդը մեծ քանակությամբ մտնելով հնոց, սառեցնում և նրան ու ինքը տաքանալով դուրս և գնում, տանելով իր հետ վառելանութից բաժանված ածխաջրածինները, վորոնք հնոցի սառչելու պատճառով այնքան չեն տաքանում, վոր բանկին: Աւրեմն յերբ հնոցի դռները բացում են, անպատճառ պետք և ծխանցքի սողնակը ծածկվի, վոր իդուր տեղը տաքությունը ոդի հետ դուրս չդնա ու վառելիք քիչ ծախսվի:

Յեթե վառելիքը նավթ և ու կաթսան սարքավորած և վերջին կատարելագործված ֆորսունկաներով, վորը նավթը լավ, մասն փոշիացնում ու փոշիացած մանրիկ կաթիները ցրում և հեռու, բոցը յերկարացնում և ու կըակը ուժեղացնում, այդ դեպքում անհրաժեշտ և կանկաշիրիան և կորնվալան շողեկաթսաների հնոցագլանները շեմքից սկսած, մոտ 2 մետր դեպի ներս, պատել հրակայուն աղբասով, կաթսացի յերկաթը ժամանակից առաջ այրիվելուց պաշտպանելու համար:

Յեթե ֆորսունկաներին նավթ մատուցելը կատարվում և պոմպով, ու փոշիացվում և ֆորսունկացի ակուներում պոմպի ճնշման ազդեցության տակ, առանց շոգու, հիշալ ակուները հաճախակի խնուվից պաշտպանելու համար, հանձնարարվում և նավթը քամել մանր պղնձյա ցանցով: Հնոցում այրվող նավթը, մանավանդ հիշալ ֆորսունկաների համար, անպայման պետք և տաքացվի ու ջերմության աստիճանը մոտեցվի նավթի բանկման աստիճանին: Այս գեղքում նավթը բանկման համար նախապարաստած ջերմությամբ փոշիացած լցիկելով կաթսացի հնոցագլանը, հնոցից կամ այրման վայրից ավելորդ տաքություն չի խլում և յերկրորդը՝ տաքացած նավթը ջրիկանում և, խողօքականերով հեշտությամբ և հոսում և, վոր ամենագըլիավորն և, լավ և փոշիանում:

Նավթով այրվող հնոցի վառելը պետք և տեղի ունենա հետեւալ կերպ.

Յերբ նավթը պոմպով ուղղվում և զեպի ֆորսունկան (առանց շոգու) պետք և փոշիացած նավթի հոսանքի առաջ նախ պահել վառած կրակը, ապա բաց անել նավթարեր խողովակի վրա դրած կափուրը, ֆորսունկայի աշխատանքը դադանակ պետք և կանգնեցնել պոմպը: Յեթե նավթը փոշիացվում և շոգիով նախ պետք և դուրս թողնել խոտացած շոգին՝ ջուրը՝ ֆորսունկայի միջից, բացել շոգու կափուրը, մոտեցնել վառած կրակը և վերջապես թողնել նավթի հոսանքը:

Աշխատանքը դադարեցնելին՝ նախ պետք և փակել նավթի և ապա շոգու կափուրները: Հիշած հաջորդականությունը չպահպանելուց հաճախ բոցը հետ

և տալիս, ու անփորձ հնոցապահներին, վորոնք ֆորսումնկան վառելուց կանգնում են հնոցի դռնակների առաջ, պատճառում է այրվածքներ:

Հրդեհի տևակետից ամենայերկուը վալին
է համարել հեղուկ վառելանը թիւերը, ու հենց դրա համար ել հնոցապահնը, վորը սպասալորում է այս վառելիք մատակարարված շոգեկաթիւսաները, պարտավոր և կրկնակի ուշադիր լինել յուր հերթի ժամանակ ու հակել մաքրության, վորպիսպի նավթը չթափվի հատակի վրա կամ կաթսալի առաջի առվակի մեջ, վորովհետեւ յեղել են զեպքեր, յերբ հիշված առվակում տաքացած, բանկման պարաստ նավթը սկսել է վառվել ու մեծ հրդեհի պատճառ յեղել:

Անհրաժեշտ է ունենալ կաթսայատանը՝ մոտ 1 կես քառակուսի մետրանոց ամենահասարակ բրդից թեթև լմած թաղիքներ (կաշմա), վորը շուկալում լինում է զլխափորապես հրդեհաշեջ նպատակների համար ու ավաղ, վորոնցով միայն կարելի յե հաջողությամբ հանգցնել նավթի այրումը: Նավթի հրդեհը ջրով հանգցնել անկարելի յե: Նավթի բոցը պետք է այնպես կարգավորել, վոր ուղղված չլինի դեպի հնոցաղանի պատերը, ուրիշ խոսքով՝ պետք է աշխատել վոր բոցի ու հնոցապլանի առանցքները միմյանց ծածկեն, հակառակ գեպքում՝ լեթի բացը խփի կաթսալի յերկաթին, առաջ կրերի այրումն ու քայլայումն:

Լանկաշիրքան շոգեկաթսան վառելիս յերկու հնոցապլաններն ել պետք է միաժամանակ վառել: Խոտիվ արգելվում է աշխատեցնել կաթսան, տաքացնելով միայն մեկ հնոցապլանը: Յերբ փորսունկան վառվում է բոցը, պետք է պակասացնի հավասարապես բոլոր փորսունկաներում:

Կոռւմ ե անհամեմատ ավելի տաքանալ մրուներից, առաջ է գալիս կարերի խանգարումն, ու կաթսան ըսկում ե կաթել: Յերբ հնոցապահնը հանգցնում է մեկ հնոցաղանում Փոսունկան, իսկ յերկրորդում թողնում է վառած, առաջինը սկսում է սառչել, լինում է կրկին վերև հիշված քայլայումը: Ուրեմն յերբ հնոցապահնը հանգցնում է կաթսան, պետք է հանգցնի միաժամանակ բոլոր փորսունկաները կամ յերբ քչացնում է բոցը, պետք է պակասացնի հավասարապես բոլոր փորսունկաներում:

Հնոցում ողի ու նավթի հոսանքների կարգավորումը, հենց նավթի խնալողության տևակետից, մեծ նշանակություն ունի:

Հնոցի ծուխը ծխանից դուրս պետք է զա բաց կապտագույն, զլանակի ծխի գույնի, յերբ ալբեցման համար այդ յերկու անհրաժեշտ նյութերի մատակարարումը համաչափ է կարգավորված: Ողի ավելցուկը կամ պակասը հնոցում պատճառ և լինում տաքության կորչելուն, ալսինքն նավթի ամբողջովին չարգելուն: Յեթե ծխանից դուրս է զալիս թանձր սկ ծուխ, նշանակում է, վոր ողի հոսանքը քիչ է, պետք է հնոցի դռնակների արանքները ավելի բացել և բարձրացնել ծխատար անցքի սողնակը ու սրանցով այնպես կարգավորել մինչև դուրս յեկող ծխի գույնը փոխվի բաց կապտագույնի: Յեթե մանումետրի ոլաքը ցածացել է ու հնոցապահնը կարերի և զգում կաթսան ուժեղ տաքացնելու, փոխանակ ողի հոսանքը քչացնելու, կարող է նավթի հոսանքը ուժեղացնել, եփեկտը կլինի նույնը, լեթի հնոցապահնը կարողանա կարգավորել հետեւղով ծխի գույնին:

Պետք և խռւսափել նույնապես այն դեպքերից, իբրև ծխանից զուրս լեկող գաղերը բոլորովին անգույն են ու աննկատելի: Սա հաճախ ապացուց և ողի քանակից շատության ու կարող և պատճառ լինել վառելիքի անխնա, աննպատակ ծախսման: Այս դեպքում նույնպես պետք և կարգավորել ողի և նավթի մատակարարումը, մինչև բաց կապտագույն ծիրի լերն վալ:

IX. ԾՈԳԵԿԱԹՍԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՏԵԼԸ

Կաթսայի աշխատանքի ընդհատումները լինում են լերեք տեսակի, առաջին՝ կարճ ընդհատում նախաճաշի կամ ճաշի ժամանակի, լերկրորդ՝ ավելի լերկարատե—աշխատանքի վերջնալուց հետո, ամբողջ գիշերը 14—16 ժամով, կամ տոն և կիրակի որերը, իբրև ընդհատումը լինում է 40—42 ժամ և վերջապես լերը շողեկաթսան կանգնում և մաքրելու, վերանորոգման ու փորձի համար կտմ ավելի լերկար ժամանակով:

Առաջին դեպքում, լերը շոգու ոգտագործումն ընդհատվում է մի ժամով, պետք և ծխատար անցքի սողնակը ծածկել, դադարեցնել հնոցը նոր վառելիք գցելը ու կաթսան մնել մինչև վոր ջրի բարձրությունը անցնի ապակու կեսից: Այս բոլորը պետք և կատարել նրա համար, վոր ընդհատվի կաթսայի մեջ նոր շոգու դրացումը, վորի կարիքը չկա աշխատանքների դադարեցման պատճառով: Կարճատե ընդհատման ժամանակ խստիվ արգելվում է կաթսան թողնել առանց հսկողության, հնոցապանը կամ նրա ոգնականը պետք և մնան կաթսաբատանը ու հսկեն ջրի բարձ-

րության ու մանոմների սլաքին, վորպեսզի առաջինը թուլատրվածից ցած չիջնի, իսկ լերկրորդը ապակու վրայի կարմիր գծից չանցնի:

Յերբ շողեկաթսան չպետք և աշխատի ամբողջ գիշերը կամ 1—2 որով, հնոցապանը պետք և ժամացոցով հետեւի ընդհատման ժամկետի մոտենալուն ու մոտավորապես մեկ ժամ առաջ սկսի վառելիքի մատակարարումը քիչ-քիչ պակասացնել ու 20—30 բոպե դադարից առաջ բոլորովին վերջացնի հնոցը վառելանլութ գցելը, վորպեսզի ամբողջ շոգին, վորը գործել և վորոշ քանակությամբ վառելիք ալրվելուց, առանց ոգտագործման չմնա, ջուր չդառնա ու չը-կորչի:

Խինծի հնոցների վառելը պետք և ավելի շուտ դադարեցնել, վորովհետև աղյուսե շարվածքի մեջ ամբարվում և մեծ քանակությամբ տաքություն, վորի մի մասը արտացոլվում և հնոցի վառելը ընդհատելուց հետո ու նպաստում և հետագա շնորհուացման:

Յերբորդ գեղքում, լերը կաթսան կանգնում և լերկար ժամանակով, նրա աշխատանքը բոլորովին դադարեցվում է, պետք և կաթսան ջուր լցնել մինչև ջրացույց ապակու վերևի ծորակից քիչ ցած, հնոցից ամբողջ կրակն ու մոխիրը դուրս քաշել, ծածկել ծխատար անցքի սողնակը, քանի կրակակալները տաք են, մաքրել նրանց վրայից խարամը ու մոխիրը և փակել մոխրատան ու հնոցի դռնակները ու թողնել, վոր կաթսան ու նրա պատվածքը կամաց-կամաց, մի քանի որվա ընթացքում սառչեն:

Յեթե հանգամանքները ոտիպում են շտապ սա-

ունցնել կաթսան, արգելվում և նոր դադարկած տաք կաթսայի մեջ սառը ջուր լցնել վորովնետե անխուսափելիորեն գամերը և կարերը կքայքայվեն, կարող են առաջ գալ ճաքեր ու կաթսան յերկար ժամանանակով շարքից դուրս կգա:

Կաթսան շուտ սառցնելու համար թուլատրելի լեռազարի յերկրորդ որը ծխատար սողնակը քիչ բարձրացնել, բաց անել հնոցի դռները, վոր դրսի սառը ողը անցնի ծխատար բոլոր անցքերով, իր հետ տանի կանգնած տաքացած ողը նույնպես թուլատրելի լեռազարորդ որը ջրաթող կրանից բարձակ հոսանքով ջուրը բաց թողնել ու միաժամանակ սնել նրան թարմ ջրով, վորը լցվելով կաթսան, խառնվում և տաք ջրի հետ ու սրան հետոքնետե սառմցնում, չինասելով կաթսային: Յերբ մանոմետրի սլաքը իջնի զերոյի վրա, այսինքն կաթսայի մեջ ալլս ճնշում չինի, պետք է բարձրացնել առանձիւ փականները.

Յերբ կաթսան այսքան սառել է, վոր կարելի լեռազի ջուրը բաց թողնել, պետք և նրա անցքերից մեկը բացել կամ յերկու ապահովիչ փականները միասին բարձրացնել, վորպեսզի կաթսայի մեջ ող մտնի ու նոր բաց անել ջրաթող կրանը, հակառակ զեպքում կաթսայի մեջ առաջ կգա ողի պակասություն ու կաթսան կարող և վնասվել և բացի դրանից ջուրը կաթսայից դուրս չի համի:

Ահա այս կերպ լավ սառեցրած ու բացած կաթսայի մեջ միայն թուլատրելի լեռ մանել նրան վերամորոգելու կամ ճաքերու համար:

X. ՇՈԳԵԿԱԹՍԱՅԻ ՄԱՐԴՐԵԼ

Մեծ կաթսացատներում, վորտեղ միաժամանակ մի քանի կաթսաներ են աշխատում, շոգետար, սնիչ

և ջրաթող գծերը, ինաւողության համար, լինում են ընդհանուր բոլոր կաթսաների համար: Նախ քան շոգեկաթսայի մեջ նրա մաքրելու համար բանվորներ մտցնելը, պետք և հետազոտել ու համոզվել, արդյոք շոգետար, սնիչ և ջրաթող գծերի կափուլըները ու փականները լավ են փակած թե վոչ. և յեթե սրանցից մեկը լավ չի փակվում, պետք և գիծը բաժանել ամենաապահով փակ ֆլանցով: Ընդհանրապես հանձնարարվում ե, կաթսայի մեջ աշխատելու ժամանակ, մետաղալարով կապել կամ ավելի լավ ու ապահով ե գծերը զատել փակ ֆլանցներով, վորպեսզի այս յերեք գծերի վրա զրած փականներից և կափուլըներից մեկն ու մեկը սիրածամբ չբանան: Վորպեսզի շոգի գոյացնելու համար վառվող նյութը ծախսվի խնալողությամբ, շոգեկաթսայի յերկաթը չծածկվի շրթաքարի անթուլատրելի հաստությամբ չփշանա, չալրվի, ուռուցքներ չտա ու այլ վնասներ տեղի չունենան, անհրաժեշտ ե նրան պարբերաբար մաքրել:

Կաթսան սնող ջուրը բացի ցեխից ու կեղտից իր բաղադրության մեջ ունի աղեր, վորոնք ջուրը տաքանալուց զատվում ու նստում են կաթսայի յերկաթի վրա, ժանգոտեցնում, ուտում են նրան ու թուլացնում նրա ամրությունը: Ահա այս վնասակար մընացորդները, վորոնք իբրև շթաքար կաշում են կաթսայի յերկաթին և այլ կեղտերը, վորոնք նրա աշխատանքի ընթացքում հավաքվում են, պետք և մաքրել պարբերաբար, վորպեսզի կաթսայի մեջ յերկար մնալով, նրան չքայլքային ու ավելորդ վառելիք չծախսվի:

Շոգեկաթսայի ջուրը գատարկելուց հետո, իսկուն պետք և մկնել մաքրել, քանի դեռ նա թաց և վորովհետե թաց շթաքարը յերկաթից հետությամբ և

պոկվում: Իբրև գործիք, հեշտ պոկվող շթաքարը մաքրելու համար, պետք է վերցնել բարակ լերկաթից կամ ավելի լավ և թերթավոր պղնձից շինված քերիչ: Մուրճով ոգտվելիս պետք և գործածել այդպիսին պղնձից շինած: Սուր գործիքի ուժեղ հարվածներով կաթսայի շթաքարը մաքրելն արգելվում է:

Շոգեկաթսայի ներսը մաքրելիս ամենամեծ ուշաղբություն պետք և գարճնել մանումետրի խողովակի, ջրացուց ապակու, ստուգիչ ծորակների և կաթսայի հետ միացնող այլ անցքերի վրա ու առանձին հոգատարությամբ նրանց մաքրել շթաքարից ու կեղտից, վորպեսզի նրանք գալիք աշխատանքի ժամանակ անարգել գործեն: Ըստ կաթսան մնող ջրի հատկության ու նստող շթաքարի հաստության, վորոշ ժամկետներում պետք մաքրել կաթսան: Ծովային ջրով մնվող կաթսաները (Բագու) պետք և մաքրել վոչ ուշ քան 20—22 որ աշխատելուց հետո: Յերեանի ջրով մնվող կաթսաները աշխատում են անընդհատ, առանց մաքրելու, մոտ յերեք-չորս ամիս:

Պետք և ոգտվել կաթսայի աշխատանքի ընդհատման հանդամանքից ու միաժամանակ մաքրել նրա բոլոր ծխանցքները մրից, մոխրից ու վառելիքի թեթև մասերից (աչքի առաջ ունենք հնդի կճեպի վառելիքը), վորոնք հնոցի ուժեղ ձգման հետևանքով, անցնում են մինչև ծխնելուցի առաջի դարանի փոսը ու այստեղ կուտակվում:

Շոգեկաթսայի զրաբ մասերը, վորոնք շփում ունեն բոցի ու տաք դագերի հետ, ինչպես և ծխանցքները մաքրուր պահելը նույնքան կարեվոր և, վորքան նրա ներսի մասերը, վորովհետեւ կաթսայի դրսի մա-

սերին կպած մուրը շթաքարի չափ խանդարում և տաքը թույլունը ջրին հաղորդել ու նրան տաքացնել ու նույնպես պատճառ և զառնում վառելիքի ավելորդ ծախսի: Յերբ ծխանցքները լցվում են մրով, մոխրով ու վառելիքի կիսաողտագործված մասնիկներով, թուլանում և ծխանցքների ձգումը և դրա հետեանքով նույնպես ավելորդ վառելիքի ծախսում և տեղի ունենում:

Կաթսայի մաքրելը վերջացնելուց հետո, հնոցապանը պետք և մտնի կաթսայի մեջն ու անձամբ համոզվի, վոր իրապես կաթսան լավ և մաքրած ու ամբողջ կեղալ միջից հեռացված եւ Ուշիուշով պետք և զնի գամերը, կարերը, միացման բոլոր մասերը, կաթսայի յերկաթը և յեթե գտնի վոր կաթսան մաքրելուց վնասել են, կամ նկատի իրան համար մի անհասկանալի իրառությ, իսկունք պետք և այս մասին հալունի կաթսայատան համար նշանակված պատասխանատու անձին:

Յերբ գտնի, վոր կաթսան լավ և մաքրված, պետք և գուրս բերի ներսում յեղած բոլոր գործիքները, լավ չորացնի ներսից ու բոլոր անցքերը պինդ փակի:

Որենքով արգելվում և շոգեկաթսաների ներսը կամ ծխանցքները մաքրելուց լուսավորել նավթի կամ նման շուտ բունկվող նլութի լապտերով և 20 վոլտից պվելի լարումն ունեցող ելեկտրական լույսով,

XI ՇՈԳԵԿԱԹՍԱՅԻ ՄՊԱՍՎՈՐԵԼԸ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Շոգեկաթսայի տեր—հիմնարկը և կաթսայատան պատասխանատու անձը պարտավոր են կաթսայի ըս-

պասավորումը հանձնել գրադետ, 20 տարեկանից վոչ պակաս, իրենց գործը լավ դիտցող ու հասկացող բանվորների և պահանջեն, վոր նրանք ճշտությամբ կատարեն հնոցապահներին վերաբերող բոլոր կանոնները:

Հնոցապահնը իր հերթապահության ժամանակ պետք է հսկի հնոցի, կաթսալի, նրա ամբողջ արմատուրալի, կաթսան սնող ինժեկտորների և պոմպերի վրա, վոր նրանք անընդհատ ու անխափան աշխատեն և լեթե նկատի անսարքություն, պետք է իսկուն հայտնի մեքենայագետին կամ շոգետան համար պատասխանատու անձին:

Հնոցապահնը պետք է հսկի մանուետին, վոր լեռբեք նրա սլաքը չանցնի կարմիր գծից, Ամեն մի կաթսա կարող է անվտանգ պահել շոգու ճնշման արև քանակը, վորի համար նրա լերկաթի հաստությունը հաշված է, Յերբ շոգու ճնշումը ավելի է բարձրանում ու մանումետրի սլաքը անցնում է կարմիր գծից, շոգեկաթսան կարող է պալթել, վորովհետու շոգին կաթսալի պատերի վրա ճնշում է ավելի մեծ ուժով, քան նրանք կարող են տանել:

Լիովին հուս դնել ապահովիչ փականների վրա անկարելի լե, վորովհետու սրանք վոչ թե վտանգը կանխելու, այլ սպառնալիքի դեպքում ազդանշան տալու համար են:

Մանումետրը պետք է փշել հերթակալության ժամանակ ամենաքիչը մեկ անգամ:

Յերբ մանումետրի լեռեցանցքանի ծորակը փակելով, նրան բաժանում են կաթսալից ու միացնում են դրսի ողի հետ, նրա սլաքը սահուն կերպով պետք

և իջնի զերովի վրա: Նորից կաթսալի հետ միացնելիս սլաքը նույն կերպ պետք է հասնի իր նախկին տեղը: Եթե մանումետրի սլաքի շարժումը տեղի չե ունենում շատ դանդաղ, կամ կաթսալից բաժանելուց զերովի վրա չի կանգնում, նշանակում ե, վոր մանումետրը փչացած է, պետք ե նրան փոխարինել նորով,

Մանումետրի ծորակը պետք է բանալ և փակել պուլը ու դանդաղ, վոր շոգու հարվածներից նրա դսպանակը չփչանա:

Ջրացուց ապակին իր ծորակներով, նրա ապահովիչ ցանցը ու փորձի ծորակները պետք ե պահել մաքուր, շթաքարից աղատ, վոր հեշտությամբ բացվեն ու փակվեն:

Հերթի ժամանակ պետք է ջրացուց ապակին մի քանի անգամ փշել ու նրա ցուցածը ստուգել փորձի ծորակներով:

Ջրացուց ապակու լերկու ծորակները՝ վերևինը և ներքեմինը պետք է փշել հերթով. վերսի ծորակը փշելու համար փակում են ներքեմի ծորակը կաթսալի հետ միացնող անցքը ու բաց են անում ներքեմի անցքը, վորը գտնվում է ապակու կենտրոնագծի ուղղությամբ: Ներքեմի ծորակը փշելու համար վերևի ծորակը փակելով, կտրում են նրա՝ կաթսալի հետ ունեցած հաղորդակցությունը, բաց են անում ներքեմի ծորակի կաթսալին ու ապակուն միացնող փչող անցքերը: Ներքեմին ծորակի փչող անցքը փակելուց հետո, յեթե ծորակները և ապակին մաքուր են ու լավ են աշխատում, ջրի մակերեսուցիթը խսկույն պետք է հասնի իր նախկին բարձրությանը:

Յերկրորդ նշանը, վոր ապացուցում է ծորակնե-

բի և ապակու անցքերի մաքըությունը, դա ապակու մեջ ջրի թիթե լերերախ ե:

Յեթե շոգեկաթսան ունի լերկու ջրացուց ապակի, նրանց ճիշտ ցուց տված դեպքում, ջրի բարձրությունը լերկուսի մեջ ել միւնուցնը պետք ե լինի:

Ջրացուց ապակու ցուցածը ստուգելու համար, կաթսալի վրա դրված են լինում լերկու փորձի ծոռակներ: Յերբ ապակին ճիշտ չի ցուց տալիս, մինչև նրա ուղղելը, պետք ե ոգտվել վորչձի ծորակներից, վորոնցից մեկը դրված ե լինում ջրի սովորական մակերեսութից աննշան բարձր, ջրացուց ապակու մեջտեղի ուղղությամբ, իսկ լերկորդը՝ ջրի թուլատրված ամենացածր մակերեսութիւնի վրա: Բացելով այս ծորակները մենք կվորոշենք կաթսալի միջի ջրի բարձրությունը. լեթե ծորակից ջուր և հոսում, ուրեմն նրա ցանցը գտնվում է ջրի դիմացը: Յերբ ներքեւի ծորակը բանանք և տեսնենք, վոր նրանից շոգի լի դուրս փչում, նշանակում ե, վոր ջուրը իջել և ամենացածր թուլատրված մակերեսութից,—այս դեպքում պետք ե իսկույն իջեցնել ծխատար անցքի վրա դրած սողնակը, անմիջապես զուրս հանել հնոցից ամբողջ կրակը, լեթե մի քանի կաթսաներ շոգի լին մատակարարում մի ընդհանուր գծով, տվյալ կաթսալի շոգետար գծի կափուզը վակել, և բարձրացնելով ապահովիչ փականները, շոգին բաց թողնել կաթսալից: Յերբ հնոցում կրակ բոլորովին չկա, կարելի լի ծխատար անցքի սողնակը բարձրացնել ու հնոցի դռնակները բանալ, զբսի սառը ողով կաթսան շուտ սառեցնելու համար:

Ընդհանրապես արգելվում ե հնոցի կրակը ջրով

հանգցնել: Այս միջոցին կարելի լի գիմել ամենաածալը հանդամանքում միայն, լերբ բոլոր ձեռք առնված միջոցները սպասելիք հետեւանքները չեն տվիել ու լերբ սա միակ ու վերջինն ե:

Յերբ ջրի մակերեսութիւնը թեև թուլատրվածից ցածացել ե, բայց կաթսալի լերկաթը դեռ չի սկսել շիկանալ ու ջրի սնիչ անցքը միացած ե կաթսալի շոգու բաժնի հետ, կաթսան կարելի լի սնել: Բայց լերբ լերկաթը արդեն շիկացել ե, սնեն ուշ ե: Սառը ջուրը կաթսալի ուժեղ շիկացած լերկաթի վրա լցնելուց նրան քարքարում ե, առաջ ե բերում ուսուցքներ: Այսպիսի ծալրահեղ դեպքում պետք ե վարվել շատ զգույշ և խսկույն հայտնել շոգետան համար պատասխանատու անձին:

Որենքով ամեն մի շոգեկաթսալի ջրի ամենացածր մակերեսութիւնի վրա, ջրացուց ապակուն մոտ, պետք ե ամբացած լինի մետաղյա ցուցիչ հետեւալ վերաբրով «ջրի թուլատրված ամենացածր մակերեսը»:

Ապահովիչ փականների լծակը սեպել, նրա ծանրոցների կշիռը ինքնակամ ավելացնել կամ լեղած ծանրոցները լծակի վրա տեղափոխել, քրեական պատասխանատվությամբ խստիվ արգելվում ե:

Ապահովիչ փականների նշանակությունը կայտանում ե նրանում, վոր լերբ մանումետրի սլաքը կաբամիք գծին համանի, նույն վարկանին նրանք շոգի թողնելով, հրավիրեն հնոցապանի ուշադրությունը ստեղծված լերկության վրա: Հազվադեպ չե, լերբ հնոցապանը ապորինի կերպով ծանրոցների վրա աղյուս կամ մի ուրիշ բան և դնում, կամ ծանրոցի տե-

Դը լծակի վրա փոխում ե: Այս միևնույն ե թէ շոգեկաթսան ապահովիչ փականներ բոլորովին չունի, փորովինետև լծակները բեռնած են լինում շոդու թուլատրված աշխատանքի ճնշման չափով ու յերբ մասնոմերի սլաքը հասնում ե կարմիր գծին՝ բայց ապահովիչ փականների լծակները չեն բարձրանում, կաթսան ամեն վարկան կարող ե պայթել:

Հնոցապանը պարտավոր ե իր հերթի ժամանակ փորձել ապահովիչ փականը, ամենաքիչը մեկ անգամ, թեթև բարձրացնելով նրա լծակի ծալրից:

Լավ աշխատող ապահովիչը շոգի պետք ե թողնի սնկիկի արանքից ու յերբ ճնշումը սկսի անցնել ամենաբարձր թուլատրվածից, իսկուն պետք ե նշան տա: Սարքին ապահովիչ փականը հեշտությամբ բարձրանում և նույնպես իջնում ե իր տեղը և բարձրանալուց նրա բոլոր կողմերից հավասարապես պետք ե շոգի դուրս փչի ու իջեցնելուց շոգին իսկուն պետք ե ընդհատվի: Յեթե լծակից բարձրացնելուց փականը շոգի չի թողնում, նշանակում ե շթաքարը լցրել ե նրա անցքը, յեթե գդվարությամբ ե բարձրանում ու իր տեղը դնելուց շոգու հոսանքը չի կտրում, նշանակում ե, փոք փականի արանքը կեղտոտ ե: Փականի այս բոլոր անսարքությունների մասին իսկուն պետք ե համանել մեքենավարին կամ շոգետան համար պատասխանատու անձին:

Յերբ շոգեկաթսան ճնշման տակ ե, արգելվում ե նրա վրա վորյեվե վեւանորոգում կատարել: Փականագործի թեթև մուրճով անգամ բանող կաթսալին խփելը, կարող ե նրան պալթեցնել:

Պատճառը շատ պարզ ե: յերբ կաթսան աշխատում ե թուլլոված ճնշման տակ, մանոմերի սլաքը

կարմիր գծի մոտ ե, նշանակում ե կաթսալի բոլոր մասերը ձգված, լարված դրության մեջ են, ամենաթեթև հարվածը ծալր աստիճան լերկուալի յե: Յեթե վոլորակները կաթում են, մայր վոլորակները կարսելի յե թեթև ձգել սովորական բանալիցով: Արգելվում ե այս դեպքում բանալիի կոթը լերկաթը փափկում, վորովինետև տաքացած լերկաթը փափկում, կարող ե վոլորից պոկվել ու բաց անել կաթսալի անցքը, շոգիով ու ինուման ջրով մահացու ալրվածքներ հասցնել աշխատողին:

Այն շոգեկաթսանները, վորոնց տաքացման մակերեվութը 10 քառոսկուսի մետրից ավելի յե կամ վորոնք աշխատում են ամելի քան 6 մթնոլորտային ճնշմամբ, որինքով պետք ե ունենան յերկու միմյանցից անկախ աշխատող սեփէ մերենաներ:

Զրանցքը կարող ե փոխարինել սրանցից մեկին, յեթե նրա ճնշումը մեկ և կես ատմոսֆերով բարձր ե, քան կաթսայում թուլլոված բանվորական ճնշումը.

Յերկու սնիչ մեքենա լին դնում, վորպեսզի մեկը փշանալուց, նրա վերանորոգման ժամանակ, ոգտվեն յերկորոգից: դրա համար ել հնոցապանը, կաթսան սնելուց, ամեն որ փոխ առ փոխ պետք ե ոգտի՛ յերկու մեքենայից ել, վորպեսզի համոզի՛ նրանց սարքին լինելուն, վորովինետև անհրաժեշտ դեպքում նրանց չաշխատելը նույնքան ծանր հետեւանք կարող ե ունենալ, վորքան մանոմերի ճիշտ ցուց չտալը կամ ապահովիչ փականների ժամանակին չբացվելը:

Շոգեկաթսան պետք ե սնել բարակ հոսանքով, քիչ-քիչ, բայց անընդհատ, հնոցապանը պետք ե աշ-

իսատի, վոր ջրի բարձրությունը կաթսալի մեջ ըստ կարելուն միշտ միենունը լինի:

Ենք ջրի բարձրությունը կաթսալի մեջ քիչ ե տատանվում, շոգու տարածությունը մնում է անփոփոխ, շոգու արտադրությունն ել կատարվում ե միապաղադ: Բայց յերբ ջրի մակերեսութը ցածանում ե, շոգու գոյացման մակերեսութը մեծանում ե, շոգի ստացվում ե սովորականից շատ: Այս զեպքում, վորպեսզի ջրի մակերեսութը հասնի իր տեղը, հնոցապանը պետք մի անգամից շատ ջուր լցնի շոգեկաթան, վորի հետևանքը կլինի ճնշման անկումը, և վորպեսզի ճնշումը պահանջվածին հասնի, պետք ե ավեռորդ վառելիք ծախսվի:

Շոգու ճնշումն ընկնելուց, իջնում ե նաև նրա շերմության աստիճանը: Այս հանգամանքը չի կարող չազդել այն մեքենաների ու ապարատուրալի աշխատանքի վրա, վորոնց շարժում կամ տաքացնում ե հիշյալ շոգին:

Շոգեկաթսան ջրարող կրանով փչելու ժամկեաները յեվ նրա տեխնոլոգիունը վորում և շոգեան համար պատասխանու անձնը կամ մեքենայագետը: Շոգեկաթսան փչելը կամ ջրի դիրտը ջրաթող խոզովակով դուրս տանելը պետք ե կատարել շատ զգուշ, վորպեսզի թուլտվածից ավելի ջուր դուրս չթափվի, կաթսալի մասերը չբացվեն, ու չշիկանան:

Շոգեկաթսալի հաճախ կամ ուշուց փչելը կախված ե ամբողջովին կաթսան սնող ջրի հատկությունից՝ յեթե ջուրը կեղտու ու կոշտ, տալիս ե շատ շթաքար և դիրտ, պետք ե նրան հաճախ փչել, ընդհակառակը, յեթե ջուրը մաքուր ե, պետք ե ուշուց փչել:

Շոգեկաթսան պետք ե փչել նրա աշխատանքի կանող առած ժամանակը, իսկ յեթե դա անկարելի ին, փչելուց առաջ կրակը հնոցում պետք մարմանդացնել, վորովհետեւ յերբ ջուրը յեռում ե, միշտ յեղած ամբողջ կեղալ միշտ շարժման մեջ ե լինում, բայց յերբ ջուրը չի յեռում, կեղալ նստում ե հատակի վրա, գլխավորապես լրաթող անցքի մոտ ու փչելուց ջրի հետ դուրս ե թափվում:

Կաթսան փչող գծի վրա դրած կրանը պետք ե փակել, պտտելով նրա խիցը նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ պտտել ենք նրան բանալու ժամանակ: Վորպեսզի իր խտությունը չկորցնի ու ջուր բաց չլթողնի:

Պեսք ե գագարեցնել հնոցի գործողությունը, յերբ ջրի մակերեսը կաթսալում, չնայած սնման, տրագ իջնում ե, կամ թե ջուրն արդեն այնքան ցած ե իջել, վոր նա չի յերեխում ապակու մեջ, յեթե յերկու սնող սարածներն ել դադարեն գործելուց, յեթե կաթսալի վրա նկատվի ուսուցք, ճեղքվածք կամ կաթսալի պատերը շիկանան, յեթե ծխանցքների ներսում լսվի շոգու ֆշոց, յեթե յերկու ապահովիչ փականներն ել անսարք լինեն և վերջապես յեթե հնոցապանը նկատի կաթսալի գործողության մեջ իր համար անհասկանալի յերեւութիւնը բոլոր այս թված զեպքերում հնոցի աշխատանքը պետք ե կանգնեցնել:

Ենք, հնայած ապահովիչ փականների կարգի գործելուն, շոգու նեօւումը կարսայի մեջ արագ անում ե, անցնելով բռնլ արված սահմանից, պետք ե փակել ծխատար անցքը, կաթսան ջրով ուժեղ սնել, շոգին դուրս թողնել, կրակը հնոցից դուրս քաշել և

հայտնել կաթուակատան համար պատասխանատու անձին:

Ենք աներաժեշտ լինի կարսայի գործողությունն արագապես կանգնեցնել՝ պետք է կրակը հնոցից դուրս ձգել, ծալքահեղ դեպքում, վորոտեղ այդ անկարելի իւ անել, ջուր ածել վրան, յեթե վառելիքը պինդ նուութ է: Յեթե կաթսան տաքացվում է հալոցից կամ վառարանների գաղերով, այդ գելքում գազի հոսանքը պետք է կանգնեցնել, — յեթե վառելիքը նավթ է, անհրաժեշտ է փակիլ նաև վարեր խողովակի վրայի կափուրը: Կրակն ամբողջովին հանգցնելուց հետո, հարկավոր է բանալ հնոցի գոնսակները և ծխատար անցքի սողնակը, փակիլ ընդհանուր շոգետար գծի վրա լեղած կափուրը, աստիճանաբար դուրս թողնել շոգին ու այս բոլորից հետո հայտնել շոգետան համար պատասխանատու անձին:

Այս բոլոր գործողությունների միակ նպատակն է թուլ չտալ, վոր կաթսան պայմի, վորի համար սկզբում աշխատում են նրան թարմ ջրով սնելով սառեցնել ու հնոցի կրակը դուրս քաշել կամ ծխատար անցքը փակիլ, վոր կրակը հանգարտի: Յեթե այս բոլորը չեն ոգնում, այն ժամանակ դիմում են ծալքահեղ միջոցների⁵ հնոցը ջրով հանգցնելուն, կաթսայի բոլոր անցքերը բաց անելուն, վորպեսզի կաթսան դրսի ողի ուժեղ հոսանքից սառչի: Ի հարկե, այս վերջին միջոցները կաթսայի համար վնասակար են, բայց լավ ե, վոր կաթսան վնասվելով կաթի, մի տեղից ուռուցք կամ ճաք ստանա, քան պայմի, բոլորովին վոշնչաւատ, քանի կաթսացառունը ու մարդկացին զոհեր տա, Յեթե շոգեկաթսան ունի գերաջեռիչ, պետք է նրան մաքրել շաբաթը մեկ անգամ ու պահել ստրին:

XII ԾՈԳԵԿԱԹՍԱՑԻ ՎԿԱՅԱԳՐԵԼԸ

Համաձայն խորհրդավին որենքների՝ ամեն մի շոգեկաթսա նախ քան աշխատանքի գցելը, պետք է Աշխատողկոմատի տեխնիկական տեսչության կողմից լինթարկվի փորձնական հիդրավլիկ ճնշման, ներքին գննության հետ միասին ու ըստ այնմ նրա աշխատանքը թուլաւորվի: Բացի կաթսայի հիդրավլիկ ճնշումով փորձելուց, վորը կատարվում է սովորաբար վեց տարին մեկ անգամ, յեթե կաթսան նոր է, կաթսան լինթարկվում է արտաքին զննման անպայման տարին մեկ անգամ և ներքին զննման յերեք տարին մեկ անգամ:

Կաթսան անժամանակ կամ նշանակված ժամկետից առաջ ներքին զննման ու հիդրավլիկ ճնշման է լինթարկվում հետեւալ գեպքերում, յերբ՝¹⁾ աշխատանքի գցելուց առաջ յերկու կամ ավելի տարի չի գործել²⁾ կաթսան իր հին տեղից վերցրել ուրիշ տեղ են փոխադրել: ³⁾ Վերանորոգման ժամանակ հնոցագլուխ կամ կաթսայի մի ուրիշ մասը, վորի արտաքին արամագիծը 103 միլիմետրից ավել ե՝ զուրս և հանգամ յեղել, կամ փոխվել են ներքին կապերի ամբողջ քանակի 15 տոկոսը կամ յեթե փոխարինած է թերթի մի մասը կամ 5 հատ իրար կողքի գտնվող գամեր և ⁴⁾ ամեն մի վերանորոգումից հետո, յերբ յերկաթը լինցնելով կացըրել են:

Շոգեկաթսայի արտաքին զննումը կատարվում է նրա աշխատանքի ժամանակ: Այս դեպքում տեխնիկական տեսուչը ուշադրություն է դարձնելու կաթսացառ ընդհանուր զրության, շոգեկաթսայի շաբաթքի, հնոցի, կաթսակատան մեջ գտնված շոգետար

խողովակների ու կափուցբների վրա, նայում ու ծանոթանում ե սնիչ մեքենաների, ջրացուց սարվածքի, մանոմետրի, ապահովիչ փականների և այլ արմատուրալի դրության և աշխատանքին: Միաժամանակ հետաքրքրվում ե թե հսոցապանը վորքան նախապատրաստված ե իր պաշտոնի համար, վո՞րքան ծանոթ ե կաթսալի վրա յեղած սարվածքին և զիտեարդուք, թե ինչ միջոցներ պետք ե ձեռք տանի հնոցապանը ջրի մակերեսը ցածանալու կամ շոգու ճընշումը թուլատրվածից անցնելու դեպքում:

Շոգեկաթսալի հետազոտման ժամանակ ամենամեծ ուշագրությունը պետք ե դարձնել թե ներսից և թե դրսից գամերի, նրա պատերի և կապերի վրա, շոգետար և այլ խողովակների ու բոլոր մյուս մասերի վրա, շթաքարի հաստության և նրա ֆիզիկական հատկության, կաթսալի ներսում յեղած սնէչ, ջրացուց ապակու խողովակների կաթսալի հետ միացումների և կաթսալի բոլոր ծխատար անցքերի վրա:

Այն դեպքում, եթե կաթսալի ներսի հետազոտումը և նրան հիդրավլիկական ճնշմամբ փորձելը միաժամանակ է կատարվում, անհրաժեշտ ե նրա աշխատանքը վալորուք կանգնեցնել, վոր սառչի, խնամքով ցեխից, շթաքարից մրից ու մոխրից մաքրել և իմեկ կաթսալին նայելու համար անհրաժեշտ լինի նրան բաց անել՝ պետք ե շարվածքը ամբողջովին կամ նրա մի մասը, ըստ տեխնիկական տեսչի կարգադրության, քանիդել: Ամբողջ արմատուրան պետք ե շատ լավ մաքրած ու կաթսալի անցքերը ամուր ծածկած լինեն, վորպեսզի հիդրավլիկական ճնշման ժամանակ ջուր բաց չը թողնեն:

Յեթե փորձվող կաթսան մյուս կաթսաների հետ ընդհանուր գծեր ունի, պետք ե նրանց բաժանել փակ գլանցներով:

Կաթսալի ներսում և ծխանցքներում աշխատելու ժամանակ նավթի և նման հեշտ բռնկվող նյութով վառվող կամ 20 վոլտից ավելի լարումն ունեցող ելեկտրական լապտեր գործածելը արգելվում է:

Շոգեկաթսան հիդրավլիկական ճնշմամբ փորձելիս պետք ե առաջնորդվել հետևյալ կանոններով:

1. Այն կաթսաները, վորոնց մեջ շոգու բանվորական ճնշումը մեկ ատմոսֆերից բարձր չե, փորձվում ե թուլ տված բանվորական ճնշումից յերեք անգամ ավելի բարձր ճնշումով:

2. Այն շոգեկաթսաները, վորոնք աշխատելու ին մինչեւ 5 ատմոսֆեր ճնշման տակ, փորձնական հիդրավլիկական ճնշման պետք ե յենթարկվեն թուլտված ամենաբարձր բանվորական ճնշումից կը լինակի ավել:

3. Այն կաթսաները վորոնց շոգու բանվորական ճնշումը հինգ ատմոսֆեր ճնշումից բարձր ե, յենթարկվում են փորձնական հիդրավլիկական ճնշման, վոր հավասար ե թուլլատրված բանվորական ամենաբարձր ճնշմանը՝ ավելացրած հինգ ատմոսֆեր ճընշումով:

4. Փորձնական ճնշումը կաթսալի մեջ պահպում ե վոչ ավել քան հինգ բոպե, վորից հետո այդ ճնշումը դանդաղ կերպով իջեցվում ե մինչեւ թուլլատրված բանվորական ամենաբարձր ճնշումը, վորը և պահպում ե կաթսալի մեջ նրան մասնակրկիտ զննելու ամբողջ ժամանակամիջոցում:

Այն ձնշումը, վորին լենթարկվում և շոգեկաթառն, վորոշվում և տեխնիկական տեսչի ստուգի (կոնտրոլի) մանումեարավ, վորը դրվում և կաթսայի մանումեարի կողքին, միացվելով նրա ծորակի լերըորդ անդքի հետ:

Ճնշման համար անհրաժեշտ ձեռքի հիդրավլիկական մղիչը պետք է հաջթայթի կաթսայտեր հիմնարկը։ Շոգեկաթսայի դրությունը համարվում է բավարար և թուլատրվում է նրան աշխատանքի գցել, իթե նրան հիդրավլիքական ճնշման լենթարկելու ժամանակ։

1. Կաթսալիի լերկաթի վրա ճեղքվածների հետքերը չեն

2. Կաթսալի կարերից, գամերից կամ ալ մի-
ացումներից ջուռ չի հոսել կամ կաթել:

3. Յեթև կաթսալի յերկաթը չի ձեվափոխվել
դեֆորմացիալի չի յենթարկվել:

8486 կաթսան փորձելու ժամանակ նկատվին կաթոցներ, այդ տեղերը պետք ե նշանակել կալճով, փորձի ճնշումից հետո ուղղելու համար, կաթսայի՝ ճնշման տակ լուղած ժամանակը արգելվում ե նրա վրա վերանորոգումներ կատարել:

Ծողեկաթսալի մեջ փորձնական ձնշման բարձ-
րացնելը և հետո իջեցնելը պետք է կատարվի զգուշ
ու դանդաղ, հակառակ դեպքում նրա կարերը կքայ-
քալվեն:

Այսին մի շոգեկաթսալի համար Աշխաժողկումատի տեխնիկական տեսչությունից տրվում ե սահմանված ձեր մատրան, վորի մեջ զրվում են կաթսալի ամեն մի ստուգման հետևանքները:

ՄԵՆՈՒՐՏԱՅԻՆ ԿԱՄ ԱՏՄՈՒՖԵՐԱՅԻՆ ՃՆՇՈՒՄ

Վորպեսզի կարելի լինի փակ ամանի միջի ճըն-
շումը չափել ու կարգավորել, իբրև ճնշման չափանիշ
ընդունված ե այն մթնոլորտի ողի ծանրությունը,
վորով շրջապատված ե մեր յերկիրը։ Ապացուցելու
համար, վոր իրապես մթնոլորդի ողը ամենուրեք մի-
ևնույն ճնշումը ունի և այդ ճնշումը հավասար ե սըն-
դիկի սրունի 760 մ/մ բարձրության, վերցնենք մի
յերկսրունքանի ապակյա խողովակ, վորի անցքի
լայնությունը լինի մեկ քառակուսի սանտիմետր,
սրունքներից մեկի անցքը լինի փակ, իսկ մյուսը
բաց և փակ սրունքը իր հակառակ կողմում ունենա-
մեկ ծորակ։ Սկսենք այս ծորակով փակ սրունքի մեջ
լցնել սնդիկ։ Սնդիկը, լցվելով այս սրունքի մեջ, ի
հարկ ե, դուրս ե քշում այնտեղ յեղած ողը ու բըս-
նում նրա տեղը։ Այժմ այս յերկսրունքանի խողո-
վակը ամբողջովին շուռ տանք, կտեսնենք, վոր այն
խողովակում, վորի միջից ողը դուրս ե քշված, սըն-
դիկը ավելի բարձր ե կանգնած քան յերկրորդ բաց
սրունքում և յեթե այս բարձրությունների տարբե-
րությունը չափենք, կտեսնենք, վոր հավասար ե 760 մ/մ
Այս յերեկովովը շատ հեշտ հասկանալի լի։ բայ
սրունքի վրա ճնշում ե մթնոլորդի ողի ծանրությունը
և սնդիկը փակ սրունքի մեջ, վորտեղ ող չկա, դի-
մաղբության չափակելով, բարձրանում ե վերեկ։

Սկս յերկարունքանի խողովակը արգեն մեկ պարզ ձևի, բաց մանուսեար և, վորը ցուց և տալիս մեկ մթնոլորտալին կամ ատմոսփերալին ճնշում։ Եթե մենք կը ռենք այս մեկ քառակուսի սանտիմետր անցք ունեան խողովակի 760 միլիմետր բարձրության մեջ

պարունակվող սնդիկը, կտեսնենք, վոր նա հավասար ե մեկ կիլոգրամի: Պարզ է, վոր մթնոլորդի ողի և մեկ կիլոգրամ ծանրության ճնշումը մեկ քառակուսի սանտիմետր տարածության վրա հավասար են: Մեկ կիլոգրամ ծանրության ճնշումը մեկ քառակուսի սանտիմետր տարածության վրա կոչվում է մթնոլորդամին կամ ատմոսֆերալին ճնշում:

Մեկ ատմոսֆերը նույնական հավասար է 15 անգլիական ֆունտ ծանրության մեկ քառակուսի դումի վրա ճնշելուն:

Ի՞նչ Ե ԿԱԼՈՐԻՆ

Գերցնենք մեկ կիլոգրամ չոր ձյուն 0° և մեկ կիլոգրամ 80° տաք ջուր ու շուտ-շուտ միմյանց հետ խառնենք: Յերբ ձյունը ամբողջովին ջրի մեջ հալվի մենք կատանանք յերկու կիլոգրամ 0° տաքությամբ ջուր: Եշտանակում են մեկ կիլոգրամ 80° տաք ջրի ամբողջ յերմությունը ծախսվել է մեկ կիլոգրամ 0° ձյուն հալվելու վրա, ուրիշ խոսքով, մեկ կիլոգրամ ձյան հալվելու համար այնքան յերմություն է պահանջվում, վորքան հարկավոր է մեկ կիլոգրամ 0° ջուրը 80° տաքացնելու համար: Աւետմն մեկ կիլոգրամ ձյունը հալեցնելու համար մենք գործադրեցինք 80 կալորի: Տաքության այն քանակը, վորը անհրաժեշտ է մեկ կիլոգրամ ջուրը մեկ աստիճան (Յելսիուսի) տաքացնելու համար կոչվում է կալորի:

Դրառուկի վերջը զետեղում հնք Մառենի աղյուսակը՝ նրա «արդյունաբերության մեջ աշխատող հնոցապանների ուսուցումը» գրքից վերցրած:

Այդ աղյուսակի հիմք սյունյակներում բերված են կաթսալի աշխատանքի յերկուղալի լերեվուկթները, նրանց հավանական պատճառները, լերկուղալի լերեվուկթներից սպասելիք հետեվանքները, նրանց կանխելու միջոցները և հնոցապանի անելիքները յերկուղալի լերեվուկթների հանդեպ:

ՅԵՐԿՈՒՆԱԼԻ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԿԱԹՍԱՅԻ

ՀՅԴԿԱՆՈՒՐ աղյուսյակ յերկուղալի յերեվույթների, նրանց պատ-

| Համար | Յերկույթ՝ ները | Պատճառները |
|-------|------------------------------------|--|
| 1 | Շոգեկաթ- սալի ջուրը պակսելը: | <p>ա) Ջրացույց ապակին փշացած կամ կեղտոտ լինելու պատճառով, ջրի բարձրությունը ճիշտ չի ցուց տվել:</p> <p>բ) Շոգեկաթսալի սնիչ սարվածների անկանոնության, ջրաթող կրանի խցանը ամուր չփակվելու, շոգեկաթսալի կաթելու կամ նրա ունեցած ձեղքվածքի և այլ պատճառներով, ջուրը դուրս է հոսում և նրա մակերեւութը կաթսալի մեջ արագ ընկնում է: Ջրի բարձրությունը քիչ բեղած ժամանակ մեծ քանակությամբ շոգի ծախսելը:</p> |
| 2 | Ճնշման անչափ բարձրա- նալը | <p>ա) Մանումետրի փշանալը, ապահովիչ փականների անսարքությունը (ծանրոցների ավելացնելը, փականի կողչելը):</p> <p>բ) Շոգու ոպտագործման ընդհատելը (շոգու կափուրի փակվելը, զգալի թվով շոգեմեքենաների միաժամանակ կանգնելը): Վտանգը ավելի ուժեղանում է, եթե ջրի բարձրությունը կաթսալի մեջ թուլտվածից ավելի լե և փականները անսարք են:</p> |

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

ճառների, սպասելիք հետեանքների և նրանց կանխ. միջոց. մասին

| Հավանական հետևանքները | Կանխելու միջոցները | Հնոցապանի անելիքը յերկույթը նկատելուց հետո |
|--|---|--|
| կաթսայի յերկաթի ուռուցք, ճեղքվածք, պայթյուն: | <p>ա) Գետք և ջրացույց ապակիները միշտ մաքուր պահել, նրանց հաճախ փշել, անցնդնատ և ուշադիր հետևել ապակու միջի ջրի բարձրությանը:</p> <p>բ) Ամեն մի հերթի հարկավոր և ստուգել ջրամիջի մեքենաների, սընուցիչ փականի և ջրաթողի կրանի աշխատանքը:</p> <p>ըւաղագությամբ հետեւ կաթսալի անգամ յեթք նրանք ըստ յերկույթին լավ են գործում:</p> | <p>Ցեթե պարզվի, վոր ուժեղ սնելով անկարելի յերկանչան ջրի մակերեսույթը պահանջվող բարձրության վրա - հնոցի կրակը պահպան ուղարկելու համար:</p> <p>Զուրը կաթսայից դուրս թողնելու գեպքում, գործադրելով միենալոյն միջոցները:</p> <p>Հնոցի կրակը պահպան անելուց, կաթսայատան պատասխանատու անձին:</p> |
| կաթսայի պայթյունը: | <p>Ամեն հերթի անհրաժեշտու և ստուգել ապակականները և մանուկի փականները և մանումետրը:</p> <p>Ուշացը հետեւ նրանց աշխատանքին, յեթք նըրանք, ըստ յերկույթին, լավ են գործում:</p> <p>Հետեւ, վոր ջրի մակերեսույթը պահպան կրակու կիսի բարձրության վրա մնառ ու սրանից շատ չբարձրանա:</p> | <p>Հնոցի կրակը պահպան անելով կամ բոլոր ովիճակներու հանգները, շոգին բաց թողնել դուրս կամ ոգտաթարքությամբ հետեւ սրանից մեջ:</p> |

| Հ | Ծերեւութեան ները | Պատճառները | Հավանական հետևանքն. | Կանխելու միջոցները | Հնոցապանի անելիքը յերկույթը նկատելուց հետո |
|---|---|--|---|--|--|
| 3 | Շոգեստար գծի և շո- գու կա- փուրի պատովելը: | Գծի մեջ խտացած ջուրը բաց չը- թողնելը: Շոշու կտիուզը մի անդա- մից (վոչ գանդաղ) բացելը: Զրի ան- չափ լցնելը: Թերաջեռիչի միջից ջուրը բաց չթողնելը: | Շոդեկաթսա- յի պայմանը, ջորի մա- կերեսի յեր- կյուզալի ցա- ծանալը, կաթսայի մեջ ջուր լինելը: | Հոգատարությամբ կերա- ռել շոգեկաթսայի և նրա սարվածքի սպասարկման կանոնները: | Անմիջապես կանգնեցնել հնոցի աշխատանքը, կաթ- սան ուժեղ անել շոգու կափույթը փակել: |
| 4 | Գերաջեռի- չի պայ- թչունը: | Հնոցի այրման ժամանակ գերաջե- ռիչի մեջ ջուր և մնացել ու միաժա- մանակ սրա և կաթսայի մեջ միա- ցում չի լիղել: | Կաթսայի պայմանը, երբ ցնցման հետևանք: | Միենալունը: | Շատ կանգնեցնել հնոցի այրումը, գերաջեռիչը մեկուսացնել: |
| 5 | Եկոնոմա- գերի պայ- թչունը: | Եկոնոմայցերի սնումը ընդհատված ժամանակը ջրի անչափ տաքացնելը և ապահովիչ փականի փչացած լի- նելը: | Եկոնոմայ- ցերի պատ- վածքի պիե- ռումն, կաթ- սայի սովի ցնցումից և դորս չպարո- ված մասերի հարվածից պայմանը: | Յերբ եկոնոմայցերը յեր- կար ժամանակ չի սնվելու նրան տաք դագերի շիռ- մից պետք և մեկուսացնելը Ամեն որ ստուգել ապա- հովիչ փականը: Ստուգել եկոնոմայցերի մեջի ջրը ջերմությունը: | Յեթե նկատված ե, վոր ջուրն անթույլատրելի շատ է տաքացել, տաք դագերի ամրողովին կամ մասամբ պետք և բաց թողնել ու- ղիղ ծխանցք, սառցենել եկոնոմայցերի մեջ յե- ղած ջուրը մինչ 60°— 80° և եկոնոմայցերը լցնել ջրով: |
| 6 | Հնոցի մեջ և ծխանցք- ներում գագերի պայթչունը | Հնոցը վառելուց առաջ ծխանցք- ները հողմահարված չեն լիղել: Սշխա- տանքի ժամանակ—վառելանյութի վոչ լրիվ ալրումն (կրակակալ վանդակի կեղտոտ լինելը, նրանց վրա մի ան- գամից վառելիքի հաստ շերտ լըց- նելը): | Կաթսայի շարվածքի ավերումը, կամարների փլշելը, որի ցնցումից հա- վանական և կաթսայի պայմանը: | Հնոցը վառելուց առաջ ծխանցքները հողմահարել ֆազարի ժամանակ նոր վառելիք չմատակարարելը կրակակալ վանդակը բառ- աւալ թույլատրելի շերտով, հետևել մուծվող սղին, իր ժամանակին մաքրել կրակակալները: Նավթի վառելիք ոգտա- գործելու դեպքում նիշտ կարգով բացել և փակել շոգին ու նավթը, աշխա- տանքի դատարի ժամա- նակ փորսունկան հեռացնել | Պայմանը լինելուց հետո անբաժեշտ և իսկույն կանգնեցնել կաթսայի աշխատանքը: Անհապաղ հայտնել մե- քենավարին կամ կաթ- սայատան պատասխանա- տու անձին: |

| ՀԵ | ՅԵՐԱԿՈՒՅԹ-ՆԵՐԸ | ՊԱՄԱՆԱԿՆԵՐԸ | ՀԱՎԱՆԱԿԱՆ ՀԵՏԿԱՆՔՆ. | ԿԱՆԿԱՆԵՐԸ ՃԻՂՈՂՆԵՐԸ | ՀԱՌԱՎԱՆԻ ԱՆԵԼՔՆԵՐԸ |
|----|---|---|---|---|---|
| 7 | Կաթսալի վրա ու- ռուցք հայտնվելը: | Թորսունկայի բոցին անկանոն ուղ- ղություն տալը: Հնոցագլանի հրա- կայուն ազուսների թափկելը: Կաթսան մաքրելուց հետո, հնոցա- պանի անուշաղրության պատճառով, կաթսալի մեջ իրեր մնալը: Շթաքա- րի հավաքվելը: Յուղի ներկայու- թյունը կաթսալում: | Կաթսալի ողայթունը: | Կաթսան զործի զցելուց առաջ, անհրաժեշտ և ու- շի ուշով նրան զննել Անընդհատ ուշազըռու- թյամբ հետևել կաթսալի աշխատանքին և նրա օպատերի դրությանը: | Գետք և անմիջապես լանգնեցնել կաթսալի աշխատանքը: |
| 8 | Կաթսալի կարերից ու պատե- րից կա- թելը ու նրանց վրա ճեղքված- ներ յերե- փալը: | Հնոցի դռները բանալու ժամանակ սովնակը մնացել ե բաց ու շոգեկաթ- սան արագ սառել ե: Սառը ջրով ան- կանոն մնելը: Կաթսալի ճնշման տակ գտնված ժամանակը կարերի ուղ- ղումը: | Կաթսալի մեծ վերա- նորոգումը: | Անհրաժեշտ և հետևել, վոր հնոցը արագ սառեցման չննիթարկիի: Կանոնավոր մնել (անընդհատ և քիչ քանակությամբ): Թույլ չտալ վոր կաթսալի աշ- խատանքի ժամանակ նրա վրա նորոգումներ կա- տարեն: | Յերբ ձեռքը փոքր ե և կաթոցը քիչ, հարկավոր և անմիջապես հայտնել մեքենազետին կամ կաթ- սայտան պատասխանա- տու անձին ու միաժա- մանակ հնոցի կրակը քը- չացնել: Իսկ յերե ձեռքը մեծ ե, պետք ե շտապ կանգնեցնել կաթսան: |
| 9 | Կաթսալի անցքերի կափաղակ- ների պոկ- վելը: | Կաթսալի ճնշման տակ գտնված ժամանակը կափաղակների ձգելը և պտուտակների պոկվելը: | Մարդկանց ծանր այր- վածքներ պատճառելը: Ուռուցք: Յերկաթի այրվելը: Հավանական ողայթուն: | Կաթսալի ճնշման տակ յեղած ժամանակը չի կարելի թույլ տալ նրա վրա վոր մի աշխատանք: | Կաթսան կանգնեցնել Միջոցներ ձեռք առնել վնասվածներին բժշկա- կան ոգնություն հասց- նելու համար: |

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ՄԱՐԴԿԱՆՑ

- 10 Կաթսալի Կաթսալի մեջ մարդ մտնելուց առաջ հարկավոր և պարզել նրա միջի ողի դրությունը:
Քարածուխի այրման ժամանակ ձգման բացակայությունը և հնոցում ածխաթթվուտի ոքսիտի գոյացումը:
- 11 Կաթսալի Անցքերի անժամանակ բանալը:
- 12 Հարեվան Կաթսալի շողետար, սնիչ և ջրաթսղ գծերի չմեկուսացնելը:

| | | |
|------------------------|--------------------|--|
| Հավանական հետևանքն. | Կանխելու միջոցները | Հնոցապանի անելիքը յերկույթը նկատելուց հետո |
|------------------------|--------------------|--|

ՀԵՏ (ԿԱԹՍԱՆ ՄԱՔՐԵԼՈՒՑ)

| | | |
|-----|---|--|
| Մահ | Նախ քան ներս մտնելը հարկավոր և իջեցնել կաթսայի մեջ փառած մոմ: | Թանի վոր հնոցում՝ ածուխ կա, թողնել ամենաքիչ ձգումն |
|-----|---|--|

| | | |
|----------------------|---|---|
| Մանը այր- վածքներ | Հարկավոր և առաջ բաց անել ապահովիչ փականը և նայել: | Պետք և միջոցներ ձեռք առնելու ժամաներին բժշ- կական ողնություն ցույց տալու համար |
|----------------------|---|---|

| | |
|-----------------------|---|
| Այլվածքներ Ու ա հ: | Անհրաժեշտ և մեկուսաց- նել հեղձուցիչ արդելակ- ներով: |
|-----------------------|---|

Նույնը

| ՀՀ | Ցերկառլիթ-ները | Պատճառները |
|----|--|--|
| 13 | Ալբակածք-ներ նավ-թի լապ-տերներից: | Աշխաղողկոմատի որենքները չկի-րառելը: |
| 14 | Ելեքտրա-կանու-թեամբ հարվածած- | Ելեկտրոլաբերի մեկուսացման ան-բավարարությունը, լապաների միաց-ման անկանոնությունը, |
| 15 | Աշխատան-քի կարճա-տև ընդհա-տումների ժամանակ ծխանցք-ները մաք-րելուց ալրակածք-ներ ստա-նալը: | Մոխրի և ածուխի քիչ սառչելը: |

| Հավանական հետևանքն. | Հանխելու միջոցները | Հնոցապանի անելիքը յերկույթը նկատելուց հետո |
|------------------------|--|--|
| Այրվածքներ: Մ ա հ: | Պետք է արգելել շոգե- կաթսան մաքրելիս զոր- ծածել նավթի լազտեր: | Պետք է միջոցներ ձեռք առնել տուժածներին բժշ- կական ոգնություն ցույց տալու համար: |
| Մ ա հ: | Հարկավոր է գործածել ցածր լարում ունեցող ելքութական լազտերներ: | Նույնը |
| Մ ա հ: | Անհրաժեշտ և մաքրերու համար թողած անցքերից մոխիթը չըող հանգստեցնէ ու խառնել Ա ՌԱՍՏՐԵՑՈՒԻ Էլեյթ | Նույնը |

ՑԱՆԿ

| | | | |
|-----|---|-------|----|
| 1. | Նախաբան | յերես | 3 |
| 2. | Շոգեկաթսացի հնոցը | » | 5 |
| 3. | Ալլումն | » | 10 |
| 4. | Շոգեկաթսաների տեսակները . . . | » | 13 |
| 5. | Շոգեկաթսացի արժատութան . . . | » | 16 |
| 6. | Հնոցավանի պարտականությունները | » | 20 |
| 7. | Շոգեկաթսան աշխատանքի համար պատրաստելը | » | 23 |
| 8. | Շոգեկաթսան աշխատանքի զցելը . | » | 25 |
| 9. | Հնոցին հսկելը | » | 28 |
| 10. | Շոգեկաթսացի աշխատանքի ընդհատելը | » | 34 |
| 11. | Շոգեկաթսացի մաքրելը | » | 36 |
| 12. | Շոգեկաթսացի սպասարկելը հրա աշխատանքի ժամանակ | » | 39 |
| 13. | Շոգեկաթսացի վկայագրելը | » | 49 |
| 14. | Միջնորդաւոյն կամ ատմոսֆերային ճնշում | » | 53 |
| 15. | Ի՞նչ է կաղորին | » | 54 |
| 16. | Մառուքինի աղբուսակը | » | 56 |

ՀՀ Ազգային գրադարան



NL0281521

10124